

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ ՌԱՍՄԱՅԱԿԱՆ  
ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՒՈՐ ԶԵՎԵՐԻ ՎԵՐԱՑԱՆ ՄԱՍԻՆ

25 փետրվարի 2011  
թվականի

Բնագիրը՝ անգլերեն

ՌԱՍՄԱՅԱԿԱՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԿՈՄԻՏԵ

ՊԱՅՄԱՆԱԳՐՈՐԴ ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝  
ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԻԱՆ

Չորրորդ և հինգերորդ պարբերական հաշվետվության ներկայացման ժամկետն է 2008 թվականը\*

Վրաստան \*\*

[31 մայիսի 2011]

\*Նշված հաշվետվությունը պարունակում է Վրաստանի չորրորդ և հինգերորդ համակցված պարբերական զեկուցումը, որը պետք է ներկայացված լիներ 2006 թվականի հուլիսի 2-ին և 2008 թվականին: Երկրորդ և երրորդ պարբերական հաշվետվությունների, ինչպես նաև կոմիտեի այն հանդիպման համառոտ ձայնագրության համար, որտեղ այս հաշվետվությունները քննարկվեցին, տեսեք փաստաթուղթ. CERD/C/461/Add.1 և CERD/C/SR.1705 և 1706:

\*\*Հաշվետվությունների մշակման կապակցությամբ պայմանագրորդ կողմին ներկայացված տեղեկության համաձայն, նշված փաստաթղթի ձևական խմբագրում չի կատարվել ՄԱԿ-ի թարգմանչական բյուրոյում մինչև դրա առաքումը:

GE.11-41285 (E) 080311

Ցանկ

	<i>պարագր աՖ</i>	<i>էջ</i>
Ներածություն . . . . .	1	4
I. Ընդհանուր տեղեկություն . . . . .	2-13	4
ա. Միջազգային իրավունքի կարգավիճակ և ազգային իրավական փաստաթղթեր . . . . .	3-4	4
բ. Մարդու իրավունքների մասին միջազգային իրավական փաստաթղթեր . . . . . .	5	5
գ. Խտրականության դեմ պայքարի պետական հիմնարկություններ և այլ մասնագիտացված մարմիններ	6-11	5
դ. Քաղաքացիական ինտեգրման քաղաքականություն . . . . .	12	8
II. 2005 թվականին կոմիտեի եզրահանգումներում <b>(CERD/C/GEO/CO/3)</b> նշված հարցեր . . . . .	14-67	9
ա. 2-րդ Հոդվածի կապակցությամբ եզրափակիչ հանձնարարականներ . . . .	13	9
10-րդ պարագրաֆում նշված հարցերի պատասխան . . . . .	14	9
բ. 4-րդ Հոդվածի կապակցությամբ եզրափակիչ հանձնարարականներ . . . .	15	10
11-րդ պարագրաֆում նշված հարցերի պատասխան . . . . .	15-19	10
գ. 5-րդ Հոդվածի կապակցությամբ եզրափակիչ հանձնարարականներ . . . .	20	12
12-րդ պարագրաֆում նշված հարցերի պատասխան . . . . .	21-24	12
դ. 5-րդ Հոդվածի կապակցությամբ եզրափակիչ հանձնարարականներ . . . .	25	16
13-րդ պարագրաֆում նշված հարցերի պատասխան . . . . .	26-32	16
ե. 5-րդ Հոդվածի կապակցությամբ եզրափակիչ հանձնարարականներ . . . .	33	20
. . . . .	34-38	20
14-րդ պարագրաֆում նշված հարցերի պատասխան . . . . .		
զ. 5-րդ Հոդվածի կապակցությամբ եզրափակիչ հանձնարարականներ . . . .	39	22
. . . . .	40-45	22
15-րդ պարագրաֆում նշված հարցերի պատասխան . . . . .		

է. 5-րդ Հոդվածի կապակցությամբ եզրափակիչ հանձնարարականներ . . .	46	23
16-րդ պարագրաֆում նշված հարցերի պատասխան . . . . .	47-48	24
ը. 5-րդ Հոդվածի կապակցությամբ եզրափակիչ հանձնարարականներ . .	49	25
. . . . .	50-54	26
17-րդ պարագրաֆում նշված հարցերի պատասխան . . . . .		
թ. 5-րդ Հոդվածի կապակցությամբ եզրափակիչ հանձնարարականներ . .	55	28
. . . . .		
18-րդ պարագրաֆում նշված հարցերի պատասխան . . . . .	56-58	28
ժ. 5-րդ Հոդվածի կապակցությամբ եզրափակիչ հանձնարարականներ . .	59	29
. . . . .		
19-րդ պարագրաֆում նշված հարցերի պատասխան . . . . .	60-61	30
ի. 5-րդ Հոդվածի կապակցությամբ եզրափակիչ հանձնարարականներ . .	62	30
. . . . .		
20-րդ պարագրաֆում նշված հարցերի պատասխան . . . . .	63-67	31
լ. 6-րդ Հոդվածի կապակցությամբ եզրափակիչ հանձնարարականներ . . .	68	33
21-րդ պարագրաֆում նշված հարցերի պատասխան . . . . .	69-71	33
իւ. 6-7-րդ Հոդվածների կապակցությամբ եզրափակիչ հանձնարարականներ	72	34
. . . . .	73-78	34
22-րդ պարագրաֆում նշված հարցերի պատասխան . . . . .		
<b>III. Տեղեկություն Կոնվենցիայի իմպլեմենտացիայի մասին</b>		37
ա. 2-րդ Հոդված . . . . .	79	37
բ. 3-րդ Հոդված . . . . .	80	37
գ. 4-րդ Հոդված . . . . .	81-82	38
դ. 5-րդ Հոդված . . . . .	83-90	38
ե. 6-րդ Հոդված . . . . .	91-93	43
զ. 7-րդ Հոդված . . . . .	94-101	43

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

1. Նշված հաշվետվությունը Վրաստանի կառավարության չորրորդ և հինգերորդ համակցված հաշվետվությունն է ռասսայական խտրականության բոլոր ձևերի վերացման միջազգային Կոնվենցիայի իմպլեմենտացիայի կապակցությամբ, որը ներկայացված է Կոնվենցիայի 9-րդ Հոդվածին համապատասխան: Հաշվետվությունը պատրաստվել է ռասսայական խտրականության վերացման կոմիտեի ընդունած ուղեցուցային ցուցմունքներին համապատասխան (CERD/C/2007/1), որը Կոնվենցիայի 9-րդ Հոդվածի առաջին կետի համաձայն, վերաբերում է պետությունների կողմից Կոնվենցիային ներկայացվելիք համապատասխան փաստաթղթերի նախապատրաստությանը: Հաշվետվությունը պարունակում է տեղեկություն՝ Վրաստանի կողմից նախորդ հաշվետվությունները ներկայացնելուց հետո, Կոնվենցիայի դրույթները կատարելու նպատակով, օրենսդրական, դատական, վարչական և այլ միջոցառումներ իրականացնելու մասին: Մասնավորապես, հաշվետվության մեջ քննարկված են այն հարցերը, որոնք արտացոլվել են ռասսայական խտրականության վերացման կոմիտեի եզրափակիչ նկատառումներում (CERD/C/GEO/CO/3):

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ**

2. Վրաստանն ազգային, մշակութային, լեզվական և կրոնական տեսակետից բազմաբնույթ երկիր է, որտեղ ազգային փոքրամասնությունների զարգացման համար անհրաժեշտ է կառավարության կողմից առանձնահատուկ ուշադրություն: Սահմանադրությունում երաշխավորված են այն անձանց իրավունքները, որոնք պատկանում են ազգային փոքրամասնություններին և արգելվում է խտրականությունը, այդ թվում ազգային և կրոնական հիմքի վրա: «Վարդերի հեղափոխությունից» հետո, Վրաստանում բոլոր ազգային փոքրամասնությունների լրիվ ինտեգրումը ներկայացնում է ներկայիս կառավարության մշտական խնդիրը:

**Ա. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**

3. Միջազգային պայմանագրերը Վրաստանի օրենսդրության անբաժանելի մասն է: »Նորմատիվային ակտերի մասին» Վրաստանի օրենքին համապատասխան (Հոդված 19.1), միջազգային պայմանագրերը և համաձայնագրերը օգտվում են գերակայությամբ բոլոր նորմատիվային ակտերի նկատմամբ, բացի Սահմանադրությունից (կամ սահմանադրական օրենքից) և սահմանադրական համաձայնագրից: Վրաստանի Սահմանադրության 6-րդ Հոդվածի, «Նորմատիվային ակտերի մասին» Վրաստանի օրենքի 20-րդ (2) Հոդվածի և «Միջազգային պայմանագրերի մասին» Վրաստանի օրենքի 6-րդ Հոդվածի համապատասխան, Վրաստանի միջազգային պայմանագրերը և համաձայնագրերը, եթե այն չի հակադրվում Վրաստանի Սահմանադրությանը, ունի գերակայող իրավաբանական ուժ ներպետական նորմատիվային ակտերի նկատմամբ: Միջազգային պայմանագրերի ինքնակատարման դրույթները ուղղակի գործում են Վրաստանում և չեն պահանջում համապատասխան ազգային նորմատիվային ակտի ընդունում:

4. Հավասարության սկզբունքն ապահովված է մի քանի ազգային օրենսդրական ակտերին համապատասխան, մասնավորապես, Վրաստանի Սահմանադրությամբ, Վրաստանի Քրեական Օրենսդրությամբ (հետագայում՝ «ՔՕ»), Վրաստանի Քրեական գործընթացային օրենսդրությամբ (հետագայում՝ ՔԳՕ), Վրաստանի քաղաքացիական Օրենսդրությամբ, Վրաստանի քաղաքացիական

գործընթացային օրենսդրությամբ, Վրաստանի ընդհանուր վարչական օրենսդրությամբ: Ստորև տրված ցանկը պարունակում է այլ օրենքներ, որոնք ուղղակի կամ անուղղակի վերաբերում են տարբեր հիմքով խտրականության արգելմանը: Դրանք են Քաղաքացիների քաղաքական միավորումների մասին օրենքը, Հավաքների և մանիֆեստացիաների մասին օրենքը, Աշխատանքային օրենսդրությունը, Հեռարձակման մասին օրենքը, Համընդհանուր կրթության մասին օրենքը, Բարձրագույն կրթության մասին օրենքը, Պացիենտի իրավունքների մասին օրենքը, Առողջապահության մասին օրենքը, Մշակույթի մասին օրենքը, Ոչկալանքային պատժակատարողական կարգի և պրոբացիայի մասին օրենքը, Նախկին Հարավային Օսեթիայի Ինքնավար Սարգում հակամարտության հետևանքով Վրաստանի տարածքում տուժածների գույքային ռեստիտուցիայի և փոխհատուցման մասին օրենքը, Մարդու վաճառքի (թրաֆիկինգի) դեմ պայքարի մասին օրենքը, Էլեկտրոնային հաղորդակցությունների մասին օրենքը, Ազատ առևտրի և մրցակցության մասին օրենքը, Դատապաշտպանների մասին օրենքը, Միջազգային մասնավոր իրավունքի մասին օրենքը, Հանրային ծառայությունում շահերի անհամատեղելիության և կոռուպցիայի մասին օրենքը, Սահմանափակ կարողությամբ անձանց սոցիալական պահպանության մասին օրենքը:

#### **Բ. Մարդու իրավունքների մասին միջազգային իրավական փաստաթղթեր**

5. Մարդու իրավունքների համապարփակ հռչակագրի հիմնական սկզբունքները ներառված են Վրաստանի օրենսդրությունում: Միջազգային համաձայնագրերը, որոնց առանձնահատուկ նշանակություն է տրվում ազգային փոքրամասնության իրավունքների և ազատությունների պահպանության տեսակետից, մասնավորապես, համապարփակ պայմանագրերը, ինչպիսիք են՝ Ցեղասպանության հանցանքից խուսափելու և պատժելու մասին կոնվենցիան, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշինքը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշինքի հավելյալ արձանագրությունը, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշինքը, Կոնվենցիա հալածանքների և այլ դաժան, անարդկային կամ արժանապատվությունը վարկաբեկող վերաբերմունքի և պատժի մասին, Կոնվենցիա աշխատանքի և զբաղվածության ոլորտում խտրականության մասին, Կոնվենցիա զբաղվածության քաղաքականության մասին, Միջազգային կոնվենցիա ռասսայական խտրականության ամեն ձևի վերացման մասին, Կոնվենցիա ապարտեիդի հանցագործության խափանման և դրա պատժի մասին, Կոնվենցիա կանանց քաղաքական իրավունքների մասին, Կանանց խտրականության բոլոր ձևերը արմատախիլ անելու կոնվենցիա, ինչպես նաև տարածաշրջանային համաձայնությունները, ինչպիսիք են. Եվրոպայի մշակութային կոնվենցիան, Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիան և դրա 4-րդ, 6-րդ, 7-րդ և 12-րդ հավելյալ արձանագրությունները, Հալածանքների և անարդկային կամ ստորացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական կոնվենցիան և դրա I և II հավելյալ արձանագրությունները, Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին Եվրոպական շրջանակային Կոնվենցիան վավերացված են Վրաստանի կողմից:

#### **Գ. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐ**

6. Վերինտեղման հարցերով պետական նախարարի աշխատակազմ: Վերինտեղման հարցերով պետական նախարարի աշխատակազմը ստեղծվել է Վրաստանի կառավարության 2008 թվականի փետրվարի 8-ի №23 որոշմամբ: Վերինտեղման հարցերով պետական նախարարի աշխատակազմի խնդիրներն են աջակցություն՝ Վրաստանի տարածքային ամբողջականության վերականգնմանը, աջակցություն՝ Աբխազիայի և Ցխինվալի տարածաշրջանի/Հարավային Օսեթիայի տեղական

բնակչության վերինտեգրմանը Վրաստանի միասնական պետականության տարածքում, ինչպես նաև աջակցություն բոլոր տարիանված և բռնի տեղաշարժված անձանց և նրանց սերունդների անվտանգ և արժանապատիվ վերադարձին: Վերինտեգրման հարցերով պետական նախարարի աշխատակազմի գործունեության ոլորտին է պատկանում աջակցությունը Վրաստանում բնակվող բոլոր ազգային փոքրամասնությունների քաղաքացիական ինտեգրմանը, իշխանության տարբեր գերատեսչությունների համակարգումը և Վրաստանի կառավարության կողմից 2009 թվականի մայիսին ընդունված ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և գործնական պլանի իրականացման վերահսկողությունը: Այս նպատակով, վերինտեգրման հարցերով պետական նախարարի №13 հրամանով, 2009 թվականի հուլիսի 3-ին ստեղծվեց միջգերատեսչական հանձնաժողով: Հանձնաժողովը միավորում է վերինտեգրման հարցերով պետական նախարարի աշխատակազմի աշխատակիցներին, ինչպես նաև համապատասխան հանրային աստիճանավորներին և տեղական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին:

7. **Վրաստանի խորհրդարան:** Վրաստանի խորհրդարանի որոշմամբ, 1995 թվականին, որպես մշտական մարմին ստեղծվեց մարդու իրավունքների պաշտպանության և ազգային փոքրամասնությունների կոմիտե: 2004 թվականին, կոմիտեի գործունեության ոլորտն ընդարձակվեց և ընդգրկեց քաղաքացիական ինտեգրումը: Նշվածի հաշվառումով, կոմիտեի անվանումը փոխվեց և կոչվեց մարդու իրավունքների պաշտպանության և քաղաքացիական ինտեգրման կոմիտե: Կոմիտեն աշխատանքն իրականացնում էրկու հիմնական ուղղությամբ՝ մարդու իրավունքների պաշտպանություն և քաղաքացիական ինտեգրում: Կոմիտեի նպատակն է նոր նորմատիվային ակտերի մշակումը, գոյություն ունեցողի զարգացումը և դրանց իմպլեմենտացիայի վերահսկողությունը: Կոմիտեի նպատակն է մարդու իրավունքների հարգման վրա հիմնված ժողովրդավարական հասարակության ստեղծման աջակցությունը, ինչպես նաև մարդու իրավունքների և քաղաքացիական ինտեգրման ոլորտում իրավական բազայի բարելավումը: Կոմիտեն համագործակցում է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների, ինչպես նաև միջազգային և ոչկառավարական կազմակերպությունների հետ, որոնք գործում են մարդու իրավունքների պաշտպանության և քաղաքացիական ինտեգրման ոլորտում:

8. **Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային խորհուրդ:** 2005 թվականի հոկտեմբերի 13-ին, Վրաստանում վավերացվեց ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիան և կառավարությունն ուժեղացրեց իր գործունեությունը պետական քաղաքականության համապատասխան ուղղությամբ: Վրաստանի նախագահի 2005 թվականի օգոստոսի 8-ի №348 կարգադրության համապատասխան, ստեղծվեց ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային խորհուրդ: Այն կազմված է գործադիր և օրենսդիր իշխանության, ժողովրդական պաշտպանի աշխատակազմի, քաղաքացիական հասարակական կազմակերպությունների և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներից: Խորհուրդը ստանձնեց հետևյալ գործառնությունների կատարումը.

ա) Հավաքել, վերլուծել և հանրագումարել Վրաստանում ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ոլորտում առկա միջազգային, կառավարական, հասարակական և ակադեմիական փորձը, ծրագրերը և նախաձեռնությունները, հետազոտությունները և նկատառումները,

բ) Ապահովել ներողամտության և քաղաքացիական ինտեգրման հարցերով լայն ազգային կոնսենսուսի ձեռքբերում՝ դրա մշակման գործում բոլոր շահագրգիռ անձանց ակտիվ մասնակցության ապահովման և քաղաքական, սոցիալական, էթնիկական կամ կրոնական խմբերի հետ երկխոսություն վարելու ուղիով,

զ) Մշակել ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և գործնական պլանի ստեղծմանը քաղաքացիական մասնակցության մեխանիզմ,

դ) Մշակել ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և գործնական պլանի իրականացումը քաղաքական, ֆինանսական, ինստիտուցիոն, օրենսդրական և փորձաքննական ռեսուրսներով ապահովելու սխեմաներ, ե) Վերլուծել Վրաստանի գործող օրենսդրությունը և մշակել օրենսդրական փոփոխությունների համալիր ծրագիր օրենսդրական թերություններն արմատախիլ անելու համար,

զ) Մշակել ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգով և Գործնական պլանով նախատեսված միջոցառումների իրականացման մոնիթորինգի և փոփոխական շրջապատի վրա նույնականորեն արձագանքելու մեխանիզմներ:

Խորհուրդը մշակեց ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգը և Գործնական պլանը, որը հաստատվեց Վրաստանի կառավարության կողմից 2009 թվականի մայիսին:

9. **Վրաստանի ժողովրդական պաշտպանի աշխատակազմ:** Վրաստանի ժողովրդական պաշտպանի աշխատակազմը վերահսկողություն է ցուցաբերում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը Վրաստանի ողջ տարածքում: Ժողովրդական պաշտպանի գործառույթները սահմանված են Վրաստանի Սահմանադրությամբ (Հոդված 43-րդ) և ժողովրդական պաշտպանի մասին Վրաստանի Օրգանական օրենքով (որն ընդունվեց 1996 թվականի մայիսի 16-ին): Ժողովրդական պաշտպանն իրականացնում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավիճակի մոնիթորինգ ինչպես ստացված դիմումների և բողոքների հիման վրա, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ, որոշում ընդունում է փաստերը քննարկելուց հետո (12-րդ, 16-րդ Հոդվածներ): Հաստատված ապացույցների հիման վրա, խախտված իրավունքները վերականգնելու նպատակով, ժողովրդական պաշտպանը մշակում է հանձնարարականներ այն մարմինների և/կամ պետական իշխանությունների համապատասխան հիմնարկությունների նկատմամբ, որոնց գործողությունն էլ առաջ է բերել մարդու իրավունքների և ազատությունների խախտում:

Ժողովրդական պաշտպանի աշխատակազմին կից, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) աջակցությամբ, գործում է հանդուրժողականության կենտրոն: Հանդուրժողականության կենտրոնը համակարգում է երկու խորհուրդ՝ ազգային փոքրամասնությունների խորհուրդը և կրոնների խորհուրդը:

10. Ազգային փոքրամասնությունների խորհուրդը ստեղծվել է 2005 թվականին փոքրամասնությունների հարցերով եվրոպական կենտրոնի աջակցությամբ:<sup>1</sup> Ազգային փոքրամասնությունների խորհուրդն ընդգրկում է ութ փոքրամասնական կազմակերպություն և նրա հիմնական գործառույթն է գործել որպես ազգային փոքրամասնությունների և կառավարական կառույցների միջև ընթացող երկխոսության և խորհրդատվությունների պլատֆորմ: Խորհրդի նպատակն է նաև երկրի քաղաքականության ձևավորման գործընթացին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ընդգրկումը և ազգային փոքրամասնությունների հետ կապված հարցերով հանձնարարականների մշակման ուղիով բարելավել և աջակցել ազգային փոքրամասնությունների քաղաքացիական ինտեգրումը: Այն նաև իրավասու է արձագանքել, եթե

<sup>1</sup> Փոքրամասնությունների հարցերով եվրոպական կենտրոնը (ECMI) ոչքաղաքական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1996 թվականին, Դանիայի թագավորության, Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Գերմանիայի Շլեզվիգ-Հոլշտեյնի նահանգի կառավարությունների կողմից: Վրաստանում կենտրոնի տեղական օֆիսը հիմնադրվեց 2006 թվականին:

փոքրամասնությունների իրավունքները խախտվեցին կամ/և կոնֆլիկտ առաջացավ և աշակցել ազգային փոքրամասնություններին պահպանելու իրենց մշակութային ժառանգությունը:

11. Կրոնների խորհուրդը հիմնադրվեց 2005 թվականի Մեմորանդումի հիման վրա, որը կնքվեց ժողովրդական պաշտպանի և տարբեր դավանանքների միջև, որտեղ կամավոր անդամագրված են կրոնական միավորումները: Կրոնների խորհրդի հիմնական խնդիրն է հանդուրժողական, արդարացի, իրավահավասար, խաղաղ միջավայրի ստեղծում և Վրաստանում գոյություն ունեցող տարբեր կրոնի ներկայացուցիչների և դավանանքների քաղաքացիական ինտեգրում: Այս նպատակով խորհուրդը, բազմակողմ երկխոսության միջոցով, ապահովում է կրոնական ասոցիացիաների հարաճուն մասնակցությունը սոցիալական կյանքին և որոշումների ընդունման գործընթացին: Ներկայումս կրոնների խորհրդի անդամ է 23 դավանանք և կազմակերպություն:

## Դ. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

12. 2005 թվականին ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի վավերացումից հետո, Վրաստանի կառավարությունը ձեռնամուխ եղավ քաղաքացիական ինտեգրման և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում համընդգրկուն պետական քաղաքականություն մշակելուն: Ինչպես վերևում նշվեց, 2009 թվականի մայիսին, Վրաստանի կառավարությունն ընդունեց ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգը և Գործնական պլանը: Ազգային հայեցակարգը սահմանում է վեց հիմնական ուղղություն. օրենքի գերակայություն, կրթություն և պետական լեզու, լրատվամիջոցներ և տեղեկատվության մատչելիություն, քաղաքական ինտեգրում և քաղաքացիական մասնակցություն, սոցիալական և տարածաշրջանային ինտեգրում, մշակույթ և ինքնագոյի պահպանում: Հայեցակարգի և Գործնական պլանի մշակման գործընթացում յուրաքանչյուր շահագրգիռ կողմ, այդ թվում քաղաքացիական հասարակայնության ներկայացուցիչները, հնարավորություն ունեին ներկայացնելու իրենց նկատառումները և առաջարկությունները՝ ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային խորհրդի շրջանակներում քննարկելու համար: Ստորագրվեց համագործակցության մեմորանդում ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային խորհրդի և ժողովրդական պաշտպանի աշխատակազմի/ազգային փոքրամասնությունների խորհրդի միջև: Գործնական պլանին համապատասխան, ստորագրվում է համագործակցության մեմորանդում ժողովրդական պաշտպանի աշխատակազմի/ազգային փոքրամասնությունների խորհրդի և համապատասխան նախարարությունների միջև: Մեմորանդումների նպատակն է ստեղծել համագործակցության և խորհրդատվության համակարգեր, ինչպես նաև ապահովել ազգային փոքրամասնությունների լայն մասնակցությունն այն որոշումների ընդունման գործընթացին, որոնք ազդեցություն են գործում նրանց օրինական շահերի վրա: Գործնական պլանի նպատակն է ստեղծել տարածաշրջանային խորհուրդներ Քվեմո Քարթլիում, Սամցխե-Ջավախեթում, Կախեթում, Շիդա Քարթլիում, Իմերեթում և Աճարայի Ինքնավար Հանրապետության կառավարությանը կից: Տարածաշրջանային խորհուրդները կազմվելու են տեղական ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների ներկայացուցիչներից և իրավասու կլինեն տեղեկություն ստանալու առաջին աղբյուրից, առաքելու նկատառումներ և խորհրդատվություն վարելու այն հարցերի կամ որոշումների մասին, որոնք վերաբերում են ազգային փոքրամասնությունների իրավունքներին:

Պետք է նշել, որ վերոնշյալ Գործնական պլանի կատարման մասին առաջին հաշվետվությունն արդեն հրապարակվեց վերինտեգրման հարցերով պետական նախարարի աշխատակազմի կողմից: Հաշվետվությունը պարունակում է 2009 թվականի մայիս-դեկտեմբեր ժամանակաշրջանը և նկարագրում է պետական գերատեսչությունների գործունեությունը վերոնշյալ վեց ուղղությամբ:

**II. 2005 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ (CERD/C/GEO/CO/3) ՆՇՎԱԾ ՀԱՐՑԵՐ**

**Ա. 2-ԸՆԴ ՀՈՂՎԱԾԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՍԲ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ**

13. Կոմիտեն ի նկատի է առնում «Վրաստանի բնակչության տարբեր խմբերի իրավունքների և ազատությունների պաշտպանության ամրապնդման 2003-2005 թվականի գործնական պլանի» ընդունումը, սակայն միևնույն ժամանակ ավստրալիացի արտահայտում այն փաստի կապակցությամբ, որ փոքրամասնությունների իրավունքները պաշտպանելու համար չեն ընդունվել օրենսդրական ակտեր:

Կոմիտեն հանձնարարում է անդամ պետությանը ներկայացնել մանրամասն տեղեկություն Վրաստանի բնակչության տարբեր խմբերի իրավունքների և ազատությունների պաշտպանության ամրապնդման 2003-2005 թվականի գործնական պլանը կատարելու մասին և դրա հետ միասին կոչ է անում անդամ պետությանն ընդունել կոնկրետ օրենսդրական ակտ փոքրամասնությունների իրավունքները պաշտպանելու համար:

14. 2003 թվականի մարտի 4-ին Վրաստանի նախագահի №68 հրամանագրով ընդունվեց Վրաստանի բնակչության տարբեր խմբերի իրավունքների և ազատությունների պաշտպանության ամրապնդման գործնական պլանը: Նշված հրամանագրի համապատասխան, Վրաստանի Ազգային Անվտանգության խորհրդին շնորհվեց գործնական պլանի իմպլեմենտացիայի մոնիթորինգի և վերահսկողության մանդատ և վերջինս ստանձնեց գործնական պլանի մասին ամենամյա հաշվետվությունների պատրաստման պարտականություն: Հատկանշական է, որ Վարդերի հեղափոխության և դրանից հետո իրականացված ինստիտուցիոն փոփոխությունների արդյունքում, Ազգային Անվտանգության խորհրդի իրավասությանը չէին պատկանում մոնիթորինգի իրականացումը և ազգային փոքրամասնությունների հետ կապված հարցերի մասին հաշվետվությունների պատրաստումը: Համապատասխանաբար, գործնական պլանի կատարման մասին ամենամյա հաշվետվություն չի պատրաստվել: Միևնույն ժամանակ, կառավարությունը հաշվի առավ այն փաստը, որ անհրաժեշտ է հարցի ինստիտուցիոնալիզացիա: Համապատասխանաբար, 2005 թվականի օգոստոսի 8-ին ստեղծվեց ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային խորհուրդ, որպեսզի այն ստանձներ Վրաստանի Ազգային Անվտանգության խորհրդի հիշատակված գործառնությունների կատարումը: Խորհրդի մասին տեղեկությունը տրված է վերևում, այս հաշվետվության 8-րդ պարագրաֆում:

**Բ. 4-ԸՆԴ ՀՈՂՎԱԾԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՍԲ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ**

15. Կոմիտեն ի նկատի է առնում Վրաստանի Քրեական Օրենսդրության 142-րդ Հոդվածի 1-ին կետի ավելացումը, որը վերաբերում է ռասայական խտրականությանը, սակայն միևնույն ժամանակ կոմիտեն ավստրալիացի արտահայտում այն քրեական իրավական նորմերի անբավարարության պատճառով, որոնցով անդամ պետության ներքին օրենսդրությունում կատարվում էր կոնվենցիայի 4-րդ հոդվածի «ա» և «բ» կետերի իրականացումը:

Կոմիտեն երաշխավորում է անդամ պետությանը XV ընդհանուր հանձնարարականին համապատասխան իրականացնել համապատասխան օրենսդրական փոփոխություններ, որպեսզի ապահովվի Կոնվենցիայի 4-րդ հոդվածի «ա» և «բ» կետերի լրիվ և նույնականորեն իրականացումը ներքին օրենսդրությունում: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի հետևյալ արարքները հանցագործություն հայտարարելուն. ռասսայական առավելության կամ ատելության վրա հիմնված գաղափարների տարածում, ռասիստական գործունեության աջակցություն, այդ թվում ֆինանսական աջակցություն, այն կազմակերպությունների և քարոզչական գործունեության անօրինական հայտարարում, որոնք օժանդակում և բորբոքում են ռասսայական խտրականություն, այդ թվում պատժելի հանցագործություն պետք է հայտարարվի նշված կազմակերպություններին և քարոզչական գործողություններին մասնակցությունը:

16. Վրաստանի Սահմանադրության 14-րդ հոդվածի համաձայն, «Ամեն մարդ ծննդով ազատ է և օրենքի առջև հավասար՝ անկախ ռասսայից, մաշկի գույնից, լեզվից, սեռից, դավանանքից, քաղաքական և այլ հայացքներից, ազգային, էթնիկական և սոցիալական պատկանելությունից, ծագումից, գույքային և դասային իրավիճակից, բնակության տեղից»: Նշված սահմանադրական սկզբունքն ամրագրված է ՔՕ 142-րդ Հոդվածով: 2003 թվականի հունիսի 6-ին, ուժի մեջ մտավ նոր 142<sup>1</sup>-րդ Հոդվածը, որի համաձայն էլ հանցագործություն հայտարարվեց բոլոր այն գործողությունը կամ անգործությունը, որը կատարվել է ազգային կամ ռասսայական թշնամություն կամ բեկում սերմանելու նպատակով, ինչպես նաև ռասսայի, մաշկի գույնի, սոցիալական պատկանելության, ազգային կամ էթնիկական ծագման նշանով մարդու իրավունքների ուղղակի կամ անուղղակի սահմանափակումը, կամ էլ նույն նշանով մարդուն առավելություն շնորհելը:

17. Կոնվենցիայի 4-րդ Հոդվածը պետություններից պահանջում է, որ դատապարտվեն այն կազմակերպությունները, որոնք օժանդակում են խտրականությանը: Այս համատեքստում ռելեվանտային (ակտուալ) է ՔՕ 142<sup>1</sup>-րդ Հոդվածը, որն ունի ընդհանուր գործողություն և այն կատարում է ռասսայական խտրականության կրիմինալիզացիա (հանցավորում) ցանկացած մասնավոր կամ իրավաբանական անձի համար: Իրավաբանական դեմքի պատասխանատվության կապակցությամբ, ռելեվանտային են հետևյալ իրավական նորմերը. Վրաստանի քաղաքացիական օրենսդրության 25-րդ Հոդվածը սահմանում է, որ իրավաբանական անձն իրավունք ունի իրականացնելու օրենքով չարգելված ցանկացած գործունեություն և այնուհետև սահմանում է քաղաքացիական պատասխանատվություն ոչձեռներեցային կազմակերպություններին՝ ցանկացած անօրեն գործողության համար (33-րդ Հոդված, Քաղաքացիական Օրենսդրություն): Դրա հետ միասին, ձեռներեցների մասին օրենքի 14-րդ Հոդվածը վերաբերում է ձեռներեցային կազմակերպությունների քաղաքացիական պատասխանատվությանը, որի արդյունքում հետևում է դրանց վերացումը:

18. Քրեական օրենսդրության համապատասխան, ռասսայական, կրոնական, ազգային և էթնիկական հիմքը համարվում է ծանրացուցիչ պարագա այնպիսի ծանր հանցագործություն կատարելու դեպքում, ինչպիսիք են. մտադրված սպանությունը (109-րդ Հոդված), առողջության մտադրված ծանր վնասումը (117-րդ Հոդված), բռնությունը (126-րդ Հոդված), վախճանվածի նկատմամբ անարգանքը (258-րդ Հոդված), հալածանքը (Հոդված 144<sup>1</sup>) և ստորացնող կամ անմարդկային վերաբերմունքը (144<sup>3</sup>-րդ Հոդված):

*Ստորև բերված աղյուսակում ցույց է տրված տարբերությունը պատիժների միջև, որոնք նախատեսված են հանցագործությունների՝ որպես այդպիսիների համար, և նույն հանցագործությունների, երբ այն մոտիվացված է ռասսայական խտրականությամբ:*

<i>Հանցագործություն</i>	<i>Ընդհանուր պատիժ</i>	<i>Երբ մոտիվացված է միտումնավորությամբ որպես ծանրացուցիչ պարագա</i>
Սպանություն	Ազատազրկում 7-ից մինչև 15 տարի ժամկետով	Ազատազրկում 13-ից մինչև 17 տարի ժամկետով
Առողջության մտադրված ծանր վնասում	Ազատազրկում 3-ից մինչև 5 տարի ժամկետով	Ազատազրկում 7-ից մինչև 9 տարի ժամկետով
Բռնություն	Ազատազրկում 1-ից մինչև 3 տարի ժամկետով	Ազատազրկում 4-ից մինչև 6 տարի ժամկետով
Վախճանվածի նկատմամբ անարգանք	Տուգանք, կամ հանրօգուտ աշխատանք, կամ ուղղիչ աշխատանք, կամ ազատազրկում մինչև 1 տարի ժամկետով	Ազատության սահմանափակում մինչև 3 տարի ժամկետով, կամ ազատազրկում մինչև 3 տարի ժամկետով
Հալածում	Տուգանք, ազատազրկում 7-ից մինչև 10 տարի ժամկետով	Ազատազրկում 9-ից մինչև 15 տարի ժամկետով, կամ պաշտոնի զբաղեցման կամ գործունեության իրավունքի զրկում մինչև 5 տարի ժամկետով
Ստորացնող կամ անմարդկային վերաբերմունք	Տուգանք, կամ ազատության սահմանափակում մինչև 3 տարի ժամկետով կամ ազատազրկում 2-ից մինչև 5 տարի ժամկետով	Տուգանք, ազատազրկում 4-ից մինչև 6 տարի ժամկետով, կամ պաշտոնի զբաղեցման կամ գործունեության իրավունքի զրկում մինչև 5 տարի ժամկետով

19. 2003 թվականին, ՔՕ մարդկայնության դեմ հանցագործության Հոդվածում (408-րդ Հոդված) իրականացված փոփոխությունների արդյունքում, ավելացվել են ռապիդի և անհանդուրժելիության

տարրերը, որոնք այն մինչ այդ չէր ներառում:<sup>2</sup> Դրա հետ միասին ռասսայական տարրեր ավելացվեցին նաև ցեղասպանության հանցագործության դեֆինիցիային:<sup>3</sup>

գ. 5-ԲԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ  
ՀԱՆՁՆԱԴԱՐԱԿԱՆՆԵՐ

20. Կոմիտեն ուղջունում է անդամ պետության կողմից մի քանի փոքրամասնությունների խմբի իրավիճակի մասին տեղեկության հաղորդումը, սակայն միևնույն ժամանակ ափսոսանք է արտահայտում այն տեղեկության աղքատության պատճառով, որը վերաբերում է որոշակի մուրացիկ փոքրամասնությունների խմբերին, հատկապես գնչուներին, և նրանց կողմից մարդու բոլոր իրավունքներից օգտվելուն:

Կոմիտեն երաշխավորում է անդամ պետությանը, որ այն հետագա պարբերական հաշվետվությունում ներառնի մանրամասն տեղեկություն բոլոր փոքրամասնությունների խմբերի մասին, այդ թվում ամենից մուրացիկ խմբերի, հատկապես գնչուների մասին: Այստեղ նեթ, կոմիտեն անդամ պետության ուշադրությունը կենտրոնացնում է XXVII ընդհանուր հանձնարարականի վրա, որը վերաբերում է գնչուների դեմ խտրականությանը:

21. 2008 թվականի երկրորդ կեսին և 2009 թվականի սկզբին, փոքրամասնությունների հարցերով եվրոպական կենտրոնն իրականացրեց հարցում, որպեսզի ստանա տեղեկություն գնչուների բնակատեղիների, ժողովրդագրական տվյալների, հասարակության սոցիալական կառուցվածքի, ինչպես նաև սոցիալական, տնտեսական և այլ մարտահրավերների մասին, որոնց հանդիպում է գնչուների հասարակությունը:<sup>4</sup> Վրաստանում գնչուների հասարակությունը կազմում է 1,000 մարդ, այդ թվում Թբիլիսիում մոլորակական բնակավայրը և Քութախում բնակվող փոքր հասարակությունը, որոնցից բոլորը հետևում են գնչուների ապրելաոճին: Նշված թվանշանը չի ներառում այն

<sup>2</sup> ՔՕ 408-րդ Հոդվածի համաձայն, հանցագործությունը մարդկայնության դեմ սահմանված է որպես «Ցանկացած արարք, գործած քաղաքացիական բնակչության կամ անձանց դեմ լայնամասշտաբ կամ սիստեմատիկ հարձակման շրջանակներում, ինչը արտահայտվեց սպանությամբ, մարդկանց զանգվածային ոչնչացմամբ, առողջությամ ծանր վնասմամբ, բռնաարտաքսմամբ (դեպորտացիա), անօրեն ազատազրկմամբ, հալածմամբ, բռնաբարությամբ, սեռական հպատակության մեջ պահելով, մարմնավաճառության հարկադրանքով, հարկադրական հղիությամբ, բռնության ստերիլիզացիայով, անձանց խմբի հետապնդմամբ քաղաքական, ռասսայական, ազգային, էթնիկական, մշակութային, կրոնական, սեռական կամ այլ նշանի հիման վրա, ապարտեիդով և այլ ոչմարդասիրական արարքներով, որոնք լուրջ վնաս են հասցնում մարդու ֆիզիկական կամ/և հոգեկան վիճակին»:

<sup>3</sup> ՔՕ 407-րդ Հոդվածի համաձայն, ցեղասպանությունը սահմանված է որպես «Արարք, կատարված համաձայնեցված պլանի իրականացման համար՝ որևէ ազգային, էթնիկական, ռասսայական, կրոնական կամ էլ որևէ այլ նշանով միավորված խմբի լրիվությամբ կամ մասնակի ոչնչացում, ինչը արտահայտվել է այդպիսի խմբի անդամների սպանությամբ, առողջության ծանր վնասմամբ, նրանց համար կյանքի ծանր պայմանների մտադրված ստեղծմամբ, ծնելիության բռնի կրճատմամբ կամ երեխայի բռնի փոխանցմամբ մեկ էթնիկական խմբից մյուսին»:

<sup>4</sup> Գիորգի Սորդիա, *Ե՞լք: Վրաստանում գնչուների հարցի կապակցությամբ իրականացված սկզբնական քայլեր*, ECMI Issue Brief No. 21 մայիսի 2009, Տես [http://www.ecmicaucasus.org/upload/publications/brief\\_21\\_eng.pdf](http://www.ecmicaucasus.org/upload/publications/brief_21_eng.pdf).

գնչուներին, որոնք բնակվում են Աբխազիայում, Վրաստան:<sup>5</sup> Մանրամասն տեղեկության համար տես ստորև բերված աղյուսակը:

**Տեղեկություն Վրաստանում գնչուների հասարակության մասին**

Բնակավայր	Գաչխանի-Գարդաբանի շրջան	Լենինոպոլկա	Դեբրվիխձղարովի	Լիլովի բնակավայր	Թբիլիսիի մոտակայք	Քուրթվի	Քոբուլեթի	Բաթումի	Թելավի
Ընտանիքների թիվը	16	11	3	17	6	17	3	3	
Անձանց թիվը	122	73	31	196	45	85	14	24	
Չափահասների թիվը	45	29	14	138	18	25	5	4	
Երեխաների թիվը	77	44	17	58	27	60	9	20	
Փաստաթղթեր ունեցող չափահասների թիվը	23	29	9	138	18	21	2	0	
Փաստաթղթեր ունեցող երեխաների թիվը	29	41	9	58	27	59	0	0	
Դպրոցական հասակի երեխաների թիվը	18	16	12	15	10	14	5	15	
Երեխաների թիվը, որոնք դպրոց են հաճախում	5	9	0	0	10	3	0	0	

<i>Եկամտի տեսակ</i>	<i>Մուրացկանություն, փոքր առևտուր</i>	<i>Գյուղատնտեսություն, մուրացկանություն, փոքր առևտուր</i>	<i>Փոքր առևտուր</i>	<i>Փոքր առևտուր, մուրացկանություն</i>	<i>Փոքր առևտուր, մուրացկանություն</i>	<i>Փոքր առևտուր</i>	<i>Փոքր առևտուր, մուրացկանություն</i>	<i>Մուրացկանություն</i>
---------------------	---------------------------------------	---	---------------------	---------------------------------------	---------------------------------------	---------------------	---------------------------------------	-------------------------

<sup>5</sup> Վրաստանի կառավարությունը զրկված է հնարավորությունից ներկայացնելու տեղեկություն այս ուղղությամբ, քանզի նա չի կարող վերահսկում իրականացնել բռնազավթված տարածքներում:

Բնակություն տեսակ	Սեփական տներ	Սեփական տներ	Ժամանակավոր ապաստարաններ, վրաններ	Վարձակառուներ/բնակարաններ	Սեփական տներ/բնակարաններ	Սեփական տներ	Վարձակառուներ	Ժամանակավոր ապաստարաններ
Էլեկտրական երգիչ	Այո, ցածր վոլտաժ	Այո	Այո	Այո	Այո	Այո	Այո	Այո
Ջրային ցանց	Ոչ, ցանց աղբյուրը 200 մետր հեռավորությամբ է	Ոչ, գյուղում ոչ մի միջոց չկա	Ոչ, բնակավայրում ոչ մի միջոց չկա	Այո	Այո	Ա	Այո	Այո
Ճյուղի միավորում	Վլախի	Վլախի	Վլախի, Կրիմի	Կրիմի	Կրիմի	Կրիմի	Կրիմի	Կրիմի
Տոհմի հետ միավորում	Բուսկա, Պլաշուն, Մելենկի, Մանկի, Տեմրյուկ	Հարբուզի, Նալիհաչի, Պալենկի	Մեկորի ա, Կալաշի	Չորադանսի, Պետալիդիս ի, Ջուջուկեա, Բուբուլիադես	Չորադանսի, Պետալիդիս ի, Ջուջուկեա, Բուբուլիադես	Չորադանսի, Պետալիդիս ի, Ջուջուկեա, Բուբուլիադես	-	-
Ծագում	Ուկրաինա, Ռուսաստան	Ուկրաինա, Ռուսաստան	Ուկրաինա, Ռուսաստան	Ուկրաինա, Ռուսաստան	Ռուսաստան, Ուկրաինա	Ռուսաստան	Ռուսաստան	Ուկրաինա

Կրոն	ուղղափառ	ուղղափառ	Ուղղափառ, մուսուլմանական	Մուսուլմանական, ուղղափառ	Ուղղափառ, մուսուլմանական	Ավետարանչական, Ուղղափառ, մուսուլմանական	Մուսուլմանական	Ուղղափառ
Մայրենի լեզու	Գնչուական լեզու	Գնչուական լեզու	Գնչուական լեզու	Գնչուական լեզու	Գնչուական լեզու	Գնչուական լեզու	Գնչուական լեզու	Գնչուական լեզու
Երկրորդ լեզու	Ռուսերեն	Ռուսերեն	Ռուսերեն, վրացերեն	Ռուսերեն, վրացերեն	Ռուսերեն, վրացերեն	Ռուսերեն	Ռուսերեն	Ռուսերեն
Տեղափոխության և առևտրի տարածման տարածք	Գաչիանի-Լիլո-Սամգրի-Դեդոփլիսձղարո	Դեդոփլիսձղարո-Լիլո-Գաչիանի	Լիլո-Սամգրի-Դեդոփլիսձղարո	Սամգրի-Քութախի-Թելավի	Քութախի-Սամգրի-Քոբուլեթի	Քոբուլեթի-Բաթումի-Քութախի	Բաթումի-Քութախի	Թելավի-Դեդոփլիսձղարո

22. Ինչպես վերևում նշվեց, գնչուների շրջանում դպրոցում սովորողների թիվը շատ ցածր է և միայն շատ քիչ երեխա է հաշվառված դպրոցում: Հետազոտություններին համապատասխան, սրա հիմնական պատճառ է անվանվել ծնողների բացասական վերաբերմունքը: Որոշ գնչու ծնողներ հայտարարեցին, որ իրենք իրենց զավակներին ուղարկել են առևտուր անելու կամ մուրացկանության, ինչը ներկայացնում է ընտանիքի հավելյալ կամ հիմնական եկամտի աղբյուրը: Այլ դեպքերում, ծնողները գերադասում են իրենց զավակներին թողնել տանը, որպեսզի նրանք զբաղվեն ընտանեկան գործունեությամբ:<sup>6</sup> Այս և այլ նման հիմնախնդիրները կարգավորելու նպատակով, մշակվեց ծրագիր՝ «Հասարակության գործողություն», որը իրականացնում է կրթության և գիտության նախարարությունը բրիտանական «Երեխաների բարձր մակարդակի խումբ» կազմակերպության հետ համագործակցությամբ: Ծրագիրը նպաստում է անկեղծ արժեքների և երկրի նկատմամբ պատասխանատվության զգացողության զարգացմանը և անպաշտպան ուսանողների մոտ մոտիվացման աճին: Ծրագրի շրջանակներում հասարակական ակտիվությունները

նպատակամղված են սոցիալապես անպաշտպան երեխաների, ծնողական խնամքից զրկված երեխաների, ինչպես նաև հատուկ կարիքներ ունեցող երեխաների և բռնի տեղաշարժված ուսանողների, Խորհրդային Միության ժամանակ հարկադրաբար տեղահանված մեսիեթցիների և փոքրամասնությունների ուսանողների ինտեգրմանը և սոցիալիզացիային:

Ծրագրի շրջանակներում, դպրոցների հետ համագործակցությամբ, մի քանի գնչու երեխա ընդունվեց հանրակրթական ինստիտուտ Քութախում և Ռուսթավում: Դրա հետ միասին գնչու երեխաներին տրվեց անհրաժեշտ հագուստ և նրանք ստացան օգնություն դպրոց ընդունվելու անհրաժեշտ փաստաթղթերը պատրաստելու համար: 2009 թվականին, դպրոցի շրջանավարտ տասը (10) գնչու, այլ ուսանողների հետ միասին, ընդգրկվեց հասարակական ակտիվություններին:

---

<sup>6</sup> Գիորգի Սորդիա, *Ե՞լք: Վրաստանում գնչուների հարցի կապակցությամբ իրականացված սկզբնական քայլեր*, ECMI Issue Brief No. 21 մայիսի 2009, էջ՝ 11-12:

23. Գնչու բնակչության շրջանում համապատասխան նույնականացնող փաստաթղթեր և բնակության հաշվառում չունենալու դեպքում կառավարությունը կարգավորում է գոյություն ունեցող հիմնախնդիրները հատուկ նախագծի միջոցով, որը իրականացնում է Վրաստանի արդարադատության նախարարության Քաղաքացիական ռեեստրի գործակալությունը՝ Լենինովկայում, Սամգորիում, Քութախում և Քոբուլեթում: <sup>7</sup>

24. Գնչուների համարյա բոլոր բնակավայրերը Վրաստանում գտնվում են բազմազգ միջավայրում, որտեղ գնչուները կարող են պահպանել մշտական կապեր տարբեր ազգային խմբի պատկանող անձանց հետ. օրինակ, վրացիների և ռուսների հետ՝ Լենինովկայում, ադրբեջանցիների հետ՝ Գաչիանում, վրացիների, հայերի և ադրբեջանցիների հետ՝ Սամգորիում և առավելապես վրացիների հետ՝ Քութախում և Քոբուլեթում: Հետազոտության շրջանակներում անցկացված հարցումների համաձայն, գնչուները չունեն որևէ խնդիր վերևում թվարկված որևէ ազգային խմբին պատկանող անձանց հետ հարաբերությունում:<sup>8</sup>

## **Դ. 5-ԸՆԴՀԱՆՈՒՄ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՀԱՆՁՆԱԴՐԱՐԱԿԱՆ**

25. Կոմիտեն նշում է լեզուների կարգավիճակի մասին օրենսդրական նորմերի բացակայությունը, փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից վրաց լեզվի իմացության կարիքը և նշված իրավիճակի շտկման համար իրականացված միջոցների պակասությունը: Կոմիտեն նույնպես նշում

է փոքրամասնությունների լեզուների կիրառումը հանրային վարչարարության գործընթացում մեծացնելու կողմը կատարված գործնական քայլերի պակասությունը:

Կոմիտեն երաշխավորում է անդամ պետությանը՝ ընդունել օրենք լեզուների կարգավիճակի մասին և նաև անցկացնել արդյունավետ միջոցներ, որպեսզի բարելավվի փոքրամասնությունների ներկայացուցիչների շրջանում վրաց լեզվի իմացությունը: Նմանապես կոմիտեն հանձնարարական է տալիս անդամ պետությանը անցկացնել գործնական միջոցներ հանրային վարչարարության գործընթացում փոքրամասնությունների լեզուների կիրառումը մեծացնելու համար:

---

<sup>7</sup> Հատկանշական է, որ գնչու բնակչության հաշվառումը գնչուների բնակավայրերում իրականացվեց Վրաստանի արդարադատության նախարարության Քաղաքացիական ռեեստրի գործակալության շարժական խմբերի կողմից:

<sup>8</sup> Գիորգի Սորդիա, *Ե՞լք: Վրաստանում գնչուների հարցի կապակցությամբ իրականացված սկզբնական քայլեր*, ECMI Issue Brief No. 21 մայիսի 2009, էջ՝ 12:

26. Ուսանողների նկատմամբ խտրականության ընդհանուր արգելումից բացի<sup>9</sup>, կրթության և գիտության նախարարությունը մշակեց երկարաժամկետ մասնագիտացված ծրագրերի պրակտիկա, որոնց նպատակն է աջակցել ներողամտության քաղաքականությանը լուսավորական համակարգերում:

#### **Պետական լեզվի դասավանդում և ինտեգրում**

27. Կրթության և գիտության նախարարությունն իրականացնում է փոքրամասնություններին պետական լեզուն սովորեցնելու անընդհատ և հետևողական քաղաքականություն, որպեսզի հաղթահարվի գոյություն ունեցող հիմնախնդիրը՝ փոքրամասնությունների խմբերում վրաց լեզվի իմացության թերությունը: Վերջին հինգ տարվա ընթացքում, նախարարության կողմից կրթության բոլոր մակարդակներով (նախադպրոցական, ընդհանուր կրթություն և չափահասների կրթություն) իրականացվել է վրաց լեզվի դասավանդման հնարավորությունների բարելավմանն ուղղված բազմաթիվ պետական ծրագիր: Մասնավորապես, 2009 թվականին, կրթության և գիտության նախարարությունը հաստատեց վրաց լեզվի ծրագիրը, որը նախատեսում է ենթածրագրի իրականացում «Նախադպրոցական մակարդակում վրաց լեզուն սովորեցնելու և սովորելու ուժեղացում փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում» վերնագրով: Այս ենթածրագրի նպատակն է, նախադպրոցական աշակերտներին հատկացված լեզվի որակյալ ծրագրերի միջոցով, երեխաների շրջանում բարելավել վրաց լեզվի իմացությունը: Պլանավորվում է

նախադպրոցական լուսավորական կենտրոնների բացում վեց ընտրված տեղական դպրոցում Քվենո Քարթլիում և Սամցխե Ջավախեթում: Նյութա-տեխնիկական բազայից բացի, ինչը անհրաժեշտ է ուսուցիչների և աշակերտների համար, ենթաձրագիրը նախատեսում է ծնողների կրթության ձեռնարկների մշակում: Որոշ այլ իրականացված միջոցառումներ պարունակում են հետևյալը.

(ա) Ամբողջ շարք դասագրքերի պատրաստում (Թավթավի) և վրացերենի, որպես երկրորդ լեզվի դասավանդման/տիրապետման նոր չափորոշիչների իրականացում Եվրոպայի խորհրդի «Եվրոպական լեզվի պորտֆելիով» և «Լեզվի դասավանդում, ուսանում և գնահատում ընդհանուր եվրոպական շրջանակային ձեռնարկով» երաշխավորված իրավասության մակարդակին համապատասխան,

---

<sup>9</sup> Ընդհանուր կրթության մասին օրենք, 7-րդ Հոդվածի համաձայն, ամեն ոք պետք է ունենա կրթություն ստանալու իրավունք և իրավունք՝ ընտրելու կրթության ձևը: 13-րդ Հոդվածն ասում է «Չի թույլատրվում դպրոց ընդունելիս որևէ տեսակի խտրականություն՝ դպրոցը պարտավոր է պաշտպանել և օժանդակել աշակերտների, ծնողների և ուսուցիչների միջև ներողամտության և փոխադարձ հարգանքի հաստատմանը, առանց խտրականության նրանց սոցիալական, ազգային, կրոնական, լեզվական և աշխարհայացքի պատկանելության: Դպրոցը հավասարության հիման վրա պաշտպանում է փոքրամասնությունների անդամների անհատական և կոլեկտիվային իրավունքը՝ ազատ օգտվելու մայրենի լեզվից, պահպանելու և արտահայտելու իրենց մշակութային պատկանելությունը:

(բ) 2007 թվականին ազգային ուսումնական պլանների և գնահատման կենտրոնի կողմից «Վրացերենը, որպես երկրորդ լեզու» նախագծի իրականացում, նոր ուսումնական պլանի մշակում վրացերենի, որպես երկրորդ լեզվի համար,

(գ) 2008 թվականին «Փոքրամասնությունների դպրոցների համար պետական լեզվի դասավանդման և տիրապետման» ծրագրի իրականացում, ամեն երկրորդ դասարանի ազգային փոքրամասնության աշակերտի համար «Եկեք, սովորենք վրացերեն» դասագիրքը ստանալու հնարավորություն,

(դ) 2007 թվականին Ախալքալաքում և Նինոծմինդայում (վայրեր, որոնք խիտ բնակեցված են հայերով) «Լեզվի տներ» հիմնադրում: Կենտրոններն առաջարկում են վրաց լեզվի դասընթացներ հանրային պաշտոնյաներին, ուսուցիչներին, զինվորական դեմքերին, սոցիալական աշխատողներին և այլ սոցիալական խմբերի ներկայացուցիչներին: Միայն 2008 թվականին, կենտրոնները սպասարկեցին 682 հոգու: Դրա հետ միասին, 2009 թվականին նման «Լեզվի տներ» ստեղծվեցին Դմանիսի և Բոլնիսի շրջաններում (վայրեր, որոնք խիտ բնակեցված են ադրբեջանցիներով): Դրանց բացման օրից, լեզվի տները ծառայություն են ցուցաբերել 100 հոգու: Զուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարական դպրոցն առաջարկում է հատուկ լեզվի դասընթացներ փոքրամասնությունների ներկայացուցիչներին, որոնք տարածաշրջանում հանրային ծառայողներ են աշխատում: 2006-2008 թվականներին, դպրոցում սովորում էր 133 ադրբեջանցի և 124 հայ ուսանող:

28. Կարևոր ասպեկտ է նաև փոքրամասնությունների դպրոցներում ուսուցիչների որակավորման բարձրացումը պետական ծրագրերի միջոցով, ինչպիսիք են. «Որակյալ վրացական դպրոցի ուսուցիչներ ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջաններում», «Փոքրամասնությունների դպրոցներում վրաց լեզվի ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագիր», «Եկեք, սովորենք վրացերեն» և «Սովորեցրու Վրաստանի համար»: Բացի դրանից, ԵԱՀԿ-ի և ԵԱՀԿ-ի փոքրամասնությունների գծով գերագույն կոմիսարի աջակցությամբ, մշակվեց հայեցակարգ և 2009-2014 թվականների գործնական պլան՝ «Մուլտիլինգվային կրթության միջոցով ազգային փոքրամասնությունների ինտեգրում»: Նախարարությունը 40 ոչվրացական հանրային դպրոցում իրականացրեց մուլտիլինգվային կրթության ծրագրի պիլոտացում:

**Բարձրագույն կրթության մատչելիություն**

29. Բարձրագույն կրթության մատչելիության նպատակով մշակվեցին հատուկ ծրագրեր, որոնց նպատակն է օժանդակել փոքրամասնությունների ուսանողների ընդունելությանը բարձրագույն ուսումնական հաստատություններ: Ընդունելության քննություններին ոչվրացալեզու ուսանողներին նախապատրաստելու, ինչպես նաև լեզվի և ընդհանուր կարողությունների թեստերից նրանց մակարդակի բարելավման համար, 2008 թվականին մշակվեց նախապատրաստական դասընթաց վրաց լեզվից և ընդհանուր կարողություններից: Թերևս, օրենսդրությունում իրականացված փոփոխությունների պատճառով, դիմողներն այժմ կարող են ընդունելության քննությունները հանձնել իրենց մայրենի լեզվով: Ինչպես ստորև տրված աղյուսակն է բացահայտում, բոլոր այս քայլերը դրական ազդեցություն գործեցին բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված փոքրամասնությունների ուսանողների թվաքանակի վրա:

<i>Բարձրագույն կրթության մատչելիություն</i>						
	<i>Գրանցված</i>		<i>Ընդունված</i>		<i>Պետական կրթաթոշակ</i>	
	<i>2007</i>	<i>2008</i>	<i>2007</i>	<i>2008</i>	<i>2007</i>	<i>2008</i>
Սամցխե-Ջավախեթի	1 069	572	213	443	116	136
Քվեմո Քարթլի	2 636	1 554	855	1 008	458	553

30. Վերջին ժամանակաշրջանում բարձրագույն կրթության օրենքում մտցված փոփոխության արդյունքում, սահմանվեց դրական քվոտ այն լուսավորական հիմնարկությունների համար, որոնք ընդունում են ուսանողներ աղյրբեջանական, հայկական, օսական և արխազական լեզուներով անցկացված ընդհանուր կարողությունների թեստերի հիման վրա: Բնստիտուտները պարտավոր են հայտարարելու նվազագույն քվոտ ազգային փոքրամասնությունների համար, որը կազմում է ամբողջությամբ առաջարկված տեղերի 5%-ը հայերի, 5%-ը՝ աղյրբեջանցիների, 1%-ը՝ օսերի և 1%-ը՝ արխազների համար:

## Փոքրամասնությունների լեզուների կիրառում

31. Վրացերենին, որպես երկրորդ լեզվի, օժանդակությունից բացի, պետությունն իրականացնում է ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվի ուժեղացման քաղաքականություն: Առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում փոքրամասնությունների լեզուներով դասագրքերի թարգմանությանը և ուսուցիչների կարողություն-հմտությունների զարգացմանը: 2,300 ընդհանուր հանրակրթական ինստիտուտի շրջանում կա 409 ոչվրացական հանրային դպրոց, այդ թվում՝ 140 հայկական, 124 ադրբեջանական, 142 ռուսական և 3 օսական դպրոց:

32. 2006 թվականին, նոր ազգային ուսումնական պլանի համաձայն, դասագրքերը թարգմանվեցին փոքրամասնությունների լեզուներով: Հատկանշական են նաև հետևյալ միջոցառումները.

(ա) «Մասձավլեբեյի» (Ուսուցիչ) ամսագիրը ուսուցիչների մասնագիտական զարգացման կենտրոնի և «Քաղաքացիական ինտեգրման և միջմշակութային կենտրոն» ոչկառավարական կազմակերպության կողմից թարգմանվեց հայերեն և ադրբեջաներեն լեզուներով և տարածվեց,

(բ) «Դիալոգ» (Երկխոսություն) թերթը, որը հատկացված է ուսուցիչների, ծնողների և աշակերտների համար, թարգմանվեց ադրբեջաներեն և հայերեն լեզուներով,

(գ) «Ուսուցման և զարգացման տեսություններ» և «Դասավանդում և գնահատում» մեթոդական ձեռնարկները թարգմանվեցին հայերեն և ադրբեջաներեն լեզուներով,

(դ) «Ոչվրացալեզու ուսանողների համար ձեռնարկների մատչելիություն» ենթաձեռագիրը ապահովում է ազգային փոքրամասնություններին Վրաստանի պատմության, աշխարհագրության և Քաղաքացիական կրթության ձեռնարկներով, որոնք թարգմանված են նրանց մայրենի լեզուներով:

(ե) 2009 թվականից քննությունների ազգային կենտրոնը վարում է դպրոցական օլիմպիադաներ վրացերեն, ադրբեջաներեն, հայերեն և ռուսերեն լեզուներով:

## Ե. 5-Դ ՀՈԴՎԱԾԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵԶՐԱՓՈԱԿԻՉ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

33. Կոմիտեն նշում է, որ անդամ պետության տարբեր ազգային փոքրամասնությունների ներկայացուցչությունը պետական մարմիններում և հանրային վարչարարությունում անհամաչափորեն ցածր է, ինչը առաջ է բերում նրանց ոչբավարար մասնակցությունը հասարակական կյանքին:

Կոմիտեն երաշխավորում է անդամ պետությանը, որ հաջորդ պարբերական հաշվետվության մեջ նա ներկայացնի ավելի շատ տեղեկություն պետական և հանրային վարչարարության մարմինների ազգային կազմի մասին: Կոմիտեն նաև հանձնարարական է տալիս անդամ պետությանը ձեռնարկելու գործնական միջոցներ այն բանի ապահովման համար, որ ազգային փոքրամասնությունները ներկայացված լինեն պետական և հանրային վարչարարության մարմիններում և նաև այն բանի համար, որ մեծացնի նրանց մասնակցությունը հասարակական

կյանքին, այդ թվում մշակի մշակութային և լուսավորչական ծրագրեր նշված խմբերի ներկայացուցիչների համար:

34. Ազգային փոքրամասնություններին օգնության և աջակցության նպատակով, Վրաստանի մշակույթի, հուշարձանների պահպանության և սպորտի նախարարությունն իրականացնում է հատուկ մշակութային քաղաքականություն: Մասնավորապես, փոքրամասնությունների համապատասխան մշակութային հիմնարկությունները ստանում են ֆինանսական օգնություն, ինչը նրանց տալիս է տարբեր մշակութային միջոցառում անցկացնելու հնարավորություն (օրինակ, Դավիթ Բաազովի Վրաստանի հրեաների պետական պատմա-ազգագրական թանգարանը, մշակութային հարաբերությունների կենտրոն Կովկասյան տունը, Միրզա Ֆաթալի Ախունդովի աղբյուրների մշակութային թանգարանը, Վրաստանում ռուսական մշակույթի կենտրոնը, Թբիլիսիի պետական հայկական և աղբյուրների թատրոնները): Դրա հետ միասին, Թբիլիսիի քաղաքապետարանը մշակեց թատերական արվեստի զարգացմանը նպաստող ծրագիր, որը ֆինանսապես օգնում է տեղական նշանակության թատրոններին (օրինակ, Գրիբոյեդովի անվան պետական ռուսական դրամատիկական թատրոն): Մայրաքաղաքից դուրս նման օգնություն իրականացնում են տեղական կառավարական հիմնարկությունները, օրինակ, տեղական իշխանությունը ֆինանսավորում է փոքրամասնությունների լեզուներով գրադարանները (25 հայկական, 15 աղբյուրների, 14 խառը և 5 օսական), ինչպես նաև բազմաթիվ արվեստից դպրոցներ, երաժշտական ուսումնարաններ և ակումբներ: Դրա հետ միասին, մշակույթի, հուշարձանների պահպանության և սպորտի նախարարությունն իրականացնում է Թբիլիսիի բոլոր պանթեոնների, այդ թվում հայ գրողների և քաղաքական դեմքերի պանթեոնի խնամքը:

35. Լուսավորական քաղաքականության հիմնական հիմքը սահմանված է ազգային ուսումնական պլանում, որը պարտավորեցնում է լուսավորական հիմնարկություններին օժանդակել լուսավորչական գործընթացներում բոլոր ուսանողների ընդգրկմանը, չնայած նրանց մտավոր կամ ֆիզիկական հնարավորություններին և սոցիալական, ազգային, կրոնական, լեզվական և գաղափարական պատկանելությանը: Դպրոցի ուսուցիչներին նշված քաղաքականությունը իրականացնելու մեջ օգնելու նպատակով՝ կրթության և գիտության նախարարությունը թարգմանեց և տարածեց Եվրոպայի խորհրդի «Կրոնական բազմազանություն և միջմշակութային կրթություն» ձեռնարկը: Բացի դրանից, խաղաղության, ժողովրդավարության և զարգացման կովկասյան ինստիտուտն աշխատում է «Աշխարհի կրոնների պատմություն» բարձր դասարանի աշակերտների դասագրքի վրա: Նշված դասագրքի նպատակն է երիտասարդ սերնդի շրջանում զարգացնել ներողամտությունը և այլ կրոնների հարգումը:

36. Վրաստանի պետական ինստիտուտները, մինչև թեկնածուներին համապատասխան պաշտոններին նշանակելը, չեն հավաքում տեղեկություն նրանց ազգային կամ կրոնական պատկանելության մասին, համապատասխանաբար, շատ բարդ է վիճակագրական տեղեկություն ներկայացնել փոքրամասնությունների հանրային հիմնարկություններում զբաղվածության մասին: Թերևս, պետք է ընդգծենք այն, որ փոքրամասնությունների ներկայացուցչությունը առանձնահատուկ բարձր է այն շրջաններում, որտեղ փոքրամասնությունները հոծ են բնակեցված, օրինակ, Նինոծմինդայի և Ախալքալաքի շրջանում (մինչև 86%) և Ծալկայի շրջանում (մինչև 55%): Դրա հետ

միասին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները աշխատում են վերինտեղման հարցերով պետական նախարարի աշխատակազմում, ազգային/էթնիկական փոքրամասնությունների հարցերով վարչության և քաղաքացիական ինտեգրման վարչության աշխատակիցների մեծամասնությունը Վրաստանում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ են:

37. Մասնավորապես, ներքին գործերի նախարարությունը գտնում է, որ ազգային փոքրամասնությունները ներկայացնում են հավելյալ արժեք ոստիկանության համար, քանզի նրանք լավ են հասկանում տեղական հետաքրքրությունները և ավանդույթները: Համապատասխանաբար, թեկնածուին, որը նույնականորեն չի տիրապետում վրաց լեզվին, մինչև ընդունելը և ընդունելուց հետո էլ առաջարկում են լեզվի դասընթաց ոստիկանության ակադեմիայում:

38. Առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում Վրաստանում ազգային փոքրամասնությունների քաղաքական մասնակցությանը և հավասար ընտրական իրավունքների ամրապնդմանը: Այս կոնկրետ հարցի կապակցությամբ, 2009 թվականին, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, միջազգային կազմակերպությունների օգնությամբ, մշակեց ընտրական քվեաթերթեր և նաև համապատասխան փաստաթղթերը փոքրամասնությունների լեզուներով (ռուսերեն, օսերեն, հայերեն և ադրբեջաներեն): Դրա հետ միասին, աուդիո և տեսա գովազդներ ադրբեջանական և հայկական լեզուներով տեղադրվեցին տարածաշրջանային հեռուստատեսային ծրագրերում, որոնք հաղորդվում են փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում:

## Զ. 5-Դ ՀՈՂԿԱԾԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՀԱՆՁՆԱԴԱՐԱԿԱՆՆԵՐ

39. Կոմիտեն ողջունում է անդամ պետության կողմից ստանձնած պարտավորությունը՝ Վրաստանից 1944 թվականին վտարված մեսխեթցիների վերադարձի և ինտեգրման մասին, ինչպես նաև վերջին ժամանակներս հիմնադրված մեսխեթցիների հայրենադարձության պետական հանձնաժողովին, սակայն միևնույն ժամանակ ափսոսանք է արտահայտում առ այն, որ ոչ մի կոնկրետ միջոց չի ձեռնարկվել նշված հարցը կարգավորելու համար:

Կոմիտեն երաշխավորում է անդամ պետությանը, որ հաջորդ պարբերական հաշվետվությունում այն ներկայացնի մանրամասն տեղեկություն մեսխեթցիների իրավիճակի մասին և նաև անցկացնի համապատասխան միջոցներ նրանց վերադարձի և Վրաստանի քաղաքացիություն շնորհելու համար, այդ թվում՝ ընդունի անհրաժեշտ օրենսդրական ակտ նշված հարցով, որը մշակման գործընթացում է 1999 թվականից:

40. 2007 թվականի հուլիսի 11-ին ընդունվեց օրենք «Նախկին ԽՍՀՄ-ի կողմից XX դարի 40-ական թվականներին Վրաստանի ԽՍՀ-ից բռնի վերաբնակեցված անձանց հայրենադարձության մասին»: Օրենքը վերաբերում է բռնի տեղահանված անձանց<sup>10</sup> և ապահովում է հարկադրաբար վերաբնակեցված անձանց, ինչպես նաև նրանց սերունդների հայրենադարձության իրավական

հիմքը: Հայրենադարձի կարգավիճակը անձին տալիս է իրավունք ընդունելու Վրաստանի քաղաքացիություն «Վրաստանի քաղաքացիության մասին» օրգանական օրենքով սահմանված ընթացակարգին համապատասխան: Վրաստանի տարհանվածների և վերաբնակեցվածների նախարարությունն իրավագոր է քննարկելու դիմումները հայրենադարձի կարգավիճակ ձեռքբերելու մասին:

41. Անձի կողմից հայրենադարձի կարգավիճակ ձեռքբերելու մասին դիմում ներկայացնելու սկզբնական ժամկետ սահմանվեց 2009 թվականի հունվարի 1-ը: Տարբեր միջազգային կազմակերպությունների հանձնարարականներին համապատասխան, Վրաստանի կառավարությունը նշված ժամկետը երկու անգամ երկարաձգեց. մինչև 2009 թվականի հուլիսի 1-ը և մինչև 2010 թվականի հունվարի 1-ը: Դրա հետ միասին, մեսիեթցի բնակչության կարիքները հաշվի առնելու նպատակով, օրենքում 2009 թվականի դեկտեմբերին երկու անգամ մտավ փոփոխություն, որով պարզեցվեց հայրենադարձության ընթացակարգը:

42. Պետք է նշել, որ մի քանի միջազգային կազմակերպություն անհանգստություն արտահայտեց հայրենադարձի կարգավիճակ ստանալուց հետո որպես քաղաքացիություն չունեցող անձ մնալու ռիսկի վերաբերյալ: Քաղաքացիություն չունենալու վտանգից խուսափելու նպատակով, դրույթն<sup>11</sup> այն մասին, որ հայրենադարձի կարգավիճակ շնորհելուց հետո անձը պետք է հրաժարվի երկրորդ երկրի քաղաքացիությունից, վերացվեց: Ավելին, Վրաստանի կառավարությունը ստանձնեց պարտականություն

---

<sup>10</sup>Բռնի վտարված անձինք նախկին Վրաստանի խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունից վերաբնակեցվեցին այլ նախկին սոցիալիստական հանրապետություններում ԽՍՀՄ-ի պաշտպանության պետական կոմիտեի 1944 թվականի հուլիսի 31-ի 6279 ՅՅ որոշման հիման վրա:

<sup>11</sup> «Նախկին ԽՍՀՄ կողմից XX դարի 40-ական թվականներին Վրաստանի ԽՍՀ-ից բռնի վերաբնակեցվեց անձանց հայրենադարձության մասին» Վրաստանի օրենքում լրացում և փոփոխություններ մտցնելու մասին Վրաստանի 2009 թվականի դեկտեմբերի 1-ի №2204 օրենք:

ընդունելու որոշում՝ «Հայրենադարձի կարգավիճակ ունեցող անձանց պարզեցված կարգով Վրաստանի քաղաքացիություն շնորհելու մասին», ինչը ապահովում էր լրացուցիչ երաշխիքներ անձին որպես քաղաքացիություն չունեցող անձ մնալու ռիսկը կանխարգելելու համար:

43. Գոյություն ունեցող վիճակագրության համաձայն, 5,806 անձ ներկայացրեց դիմում տարհանվածների և վերաբնակության նախարարություն՝ հայրենադարձի կարգավիճակ ստանալու համար: Դիմողների մեծամասնությունը բնակվում է Ադրբեջանի Հանրապետությունում, իսկ մնացածը Ուկրաինայից, Ղազախստանի Հանրապետությունից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից և այլ երկրներից են:

44. Վրացական հասարակությունում հարկադրաբար վերաբնակեցված անձանց անհիվանդագին ինտեգրման նպատակով կառավարությունը, ոչկառավարական և դոնոր կազմակերպությունները

սկսեցին վարել գիտակցության բարձրացման գործընթաց: Այս ուղղությամբ միջոցառումները ներառում են փոքրամասնությունների հարցերով եվրոպական կենտրոնի կողմից ընթացակարգերի և հայտարարությունների մասին ձեռնարկային բրոշյուրների մշակում երեք լեզուներով (ռուսերեն, անգլերեն և ադրբեջաներեն) և դրանց տարածումը մեսիեթցի բնակչության շրջանում:

45. Դրա հետ միասին, «Տոլերանտ» (Հանդուրժող) ասոցիացիան իրականացնում է նախագիծ, որն ուղղված է մեսիեթցի հայրենադարձների ինտեգրմանը, տեղեկատվական և խորհրդատվական կենտրոնների միջոցով օգնության, ամառային դպրոցների և վրաց լեզվի դասընթացների կազմակերպմանը: Այս նույն կազմակերպությունը ստեղծեց 24-ժամյա «Թեժ գիծ» ծառայությունը բռնի վերաբնակեցված անձանց համար: Դրա հետ միասին, նկարահանվեց չորս փաստագրական ֆիլմ բռնի վերաբնակեցված անձանց մասին և հաղորդվեց Վրաստանի Հանրային հեռարձակման կողմից: «Մեսիեթի հայտնի որդիներ» տեղեկատու գիրքը հրատարակվեց վրացերեն և ռուսերեն լեզուներով և ավելի ուշ տարածվեց բռնի վերաբնակեցված անձանց բնակչության շրջանում:

#### Է. 5-ԸՆԴՀԱՆՈՒՄ ԿԱՊԱՎԱՅՈՒԹՅԱՄԲ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՀԱՆՁՆԱՐԱԿԱՆՆԵՐ

46. Կոմիտեն ավստանք է արտահայտում, որ պետական հաշվետվությունում անբավարար չափով է ներկայացված տեղեկություն Վրաստանի տարածքում մշտական բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց իրավական վիճակի մասին, նրանց իրավունքների արդյունավետ իրականացման և խտրականությունից զատ ազատ մոտեցման մասին:

Կոմիտեն անդամ պետության ուշադրությունը հրավիրում է XXX ընդհանուր հանձնարարականի վրա, որը վերաբերում է քաղաքացիություն չունեցող անձանց, կոմիտեն երաշխավորում է անդամ պետությանը, ապահովել Կոնվենցիայի 5-րդ Հոդվածով նախատեսված իրավունքներից արդյունավետ օգտվելը, հատկապես դատական մատչելիության և առողջության իրավունքից:

47. Արդարադատության առջև համահավասարությունը սահմանադրական սկզբունք է Վրաստանում և այն նախատեսված է տարբեր իրավական ակտով: Սահմանադրական երաշխիքը ուժեղացնելու համար, 2007 թվականի հուլիսին, խորհրդարանի կողմից ընդունվեց անվճար իրավաբանական օգնության մասին նոր օրենք, որն ամրապնդեց անվճար իրավաբանական օգնությունն՝ առանց խտրականության: Այս օրենքի նպատակն է ամրապնդել սոցիալապես կողմնորոշված իրավաբանական օգնության համակարգը, որպեսզի օժանդակել քրեական, քաղաքացիական և վարչական վարույթով արդարադատությանը դիմելու իրավունքի արդյունավետ իրականացմանը: Իրավաբանական օգնությունը ներառում է իրավաբանական խորհրդատվություններ և իրավական փաստաթղթերի կազմում բոլորի համար այն դեպքում, երբ քրեական գործերով դատարանում ներկայացուցչությունը հնարավոր է բոլոր այն ռեզիդենտների համար, որոնք գտնվում են աղքատության սահմանից այն կողմ<sup>12</sup>, իսկ պարտադիր իրավական օգնությունը (քրեական գործերով, ինչպես դա սահմանված է ՔԳՕ-թյամբ) հնարավոր է ինչպես Վրաստանի ռեզիդենտի, այնպես էլ օտարերկրացիների համար: Իրավաբանական օգնության համակարգը Վրաստանում իրականացվում է 10 իրավաբանական օգնության բյուրոյի և (դրանց շրջանում են բյուրոներ Քվեմո

Քարթլիում, որը խիտ բնակեցված է ադրբեջանական փոքրամասնությամբ) և երկու խորհրդատվական կենտրոնի միջոցով: Մասնավորապես, քրեաձին արդարադատության բարեփոխման գործնական պլանը նախատեսում է ազգային փոքրամասնության բնակչության շահերին համապատասխան լրացուցիչ տարածաշրջանային գրասենյակների ստեղծում Մամգիե-Ջավախեթի տարածաշրջանում (2011-2013 թվականների համար): 2010 թվականի մարտից, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) օգնությամբ, վերանորոգվեց Ախալցխիայի իրավաբանական օգնության բյուրոյի գրասենյակը:

48. Առողջության իրավունքի կապակցությամբ, պետք է նշել, որ առողջության ապահովումն առանց խտրականության նախատեսված է համապատասխան իրավական ակտերով:<sup>13</sup>

<sup>12</sup> Քրեական գործերի ներկայացուցչության ապահովության համար անձը պետք է բավարարի ֆինանսական թեստի պահանջները, այսինքն՝ այն անձինք, ովքեր գրանցված են սոցիալապես անպաշտպան ընտանիքների միասնական բազայում 70,000 կամ պակաս միավորով, կամ որոշ կարգի գործերում 100,000 կամ պակաս միավորով:

<sup>13</sup> Օրինակ, առողջապահության մասին Վրաստանի 1997 թվականի դեկտեմբերի 10-ի № 1139 օրենք:

2009 թվականին, աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարի հրամանով<sup>14</sup> հաստատվեցին առողջության մի քանի պետական ծրագրեր, որոնք հավասարապես տարածվում են բոլորի նկատմամբ, լինի դա քաղաքացի<sup>15</sup>, թե ոչ քաղաքացի, այսինքն՝ արտասահմանցի, ովքեր մշտապես բնակվում են Վրաստանում: Այս ծրագրերը պարունակում են՝

- Բնակչությանը հատուկ դեղորայքով ապահովելու ծրագիր,
- Հումոֆիլով տառապող երեխաների և դեռահասների բուժման պետական ծրագիր,
- Հոգեբուժական ծառայությունների պետական ծրագիր,
- Ձինվորական ուժեր գորակոչված քաղաքացիների բժշկական հետազոտման պետական ծրագիր,
- Ֆտիզիատիկ ծառայությունների պետական ծրագիր,
- Աղքատության սահմանից ներքև գտնվող բնակչության բժշկական ապահովագրության պետական ծրագիր:

## Ը. 5-ԸՆԴՀԱՆՈՒՄ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՁՆԱԸՆԴՐԱԿԱՆՆԵՐ

49. Չնայած նրան, որ գոյություն ունեն տարհանվածների իրավական իրավիճակի մասին նորացված մոտեցումներ, կոմիտեն վերստին զարմացած է այն կապակցությամբ, որ որոշ ազգությունների տարհանվածների և ապաստարան որոնող անձանց ոչկամավոր վերադարձ է տեղի ունենում

այնպիսի պայմաններ այն ժամանակ, երբ գոյություն ունի հիմնավոր կասկած, որ ընդունող պետությունում նշանակալիորեն կվարկաբեկվեն նրանց իրավունքները:

Կոմիտեն հանձնարարական է տալիս անդամ պետությանը, հաղորդել կոմիտեին ճիշտ տեղեկություն տարհանվածների և ապաստարան որոնողների իրավական վիճակի մասին, նրանց իրավական երաշխիքների, ինչպես նաև ներքին աստիճաններում տեղահանության օրդերի բողոքարկման մեխանիզմների մասին: Կոմիտեն նույնպես պահանջում է կողմ պետությունից, որ Կոնվենցիայի 5-րդ (բ) Հոդվածին համապատասխան ապահովի՝ որ ոչ մի տարհանված չվերադառնա այնպիսի պետություն, որտեղ գոյություն ունի նրանց իրավունքների լուրջ խախտման ռիսկ: Կոմիտեն հանձնարարական է տալիս պետությանը, կատարել հետևյալ Կոնվենցիաների վավերացում. Կոնվենցիա քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին և Կոնվենցիա քաղաքացիություն չունեցող անձանց կրճատման մասին:

50. 2005 թվականին, Վրաստանի խորհրդարանն ընդունեց Վրաստանի օրենքը «Օտարերկրացիների իրավական վիճակի մասին», որպեսզի կարգավորի Վրաստան

---

<sup>14</sup> Վրաստանի աշխատանքի, առողջության և սոցիալական պահպանության նախարարի 2009 թվականի մարտի 25-ի հրաման 2009 թվականի առողջապահության ծրագրերի հաստատման մասին:

օտարերկրացիների մուտքը, գտնվելը, Վրաստանի միջով տարանցումը և ուղևորությունը Վրաստանից, ինչպես նաև սահմանեց օտարերկրացիների իրավունքները և պարտականությունները և տեղահանության ընթացակարգերը:<sup>15</sup> Մասնավորապես, օրենքի 53-րդ Հոդվածը սահմանում է արտասահմանցիների տեղահանության հիմունքները. Արտասահմանցի կարող է տեղահանված լինել, եթե նա անօրեն է մուտք գործել Վրաստան, Գոյություն չունի Վրաստանում նրա գտնվելու իրավական հիմք, Վրաստանում նրա գտնվելը հակադրվում է պետական անվտանգության շահերին և հասարակական կարգապահության պաշտպանությանը, և այլն: Պետք է նշել, որ օրենքն արգելում է անձի արտաքսումը, եթե նրան հետապնդում են քաղաքական հայացքների կամ այն գործողության համար, ինչը չի համարվում հանցանք Վրաստանի օրենսդրության համաձայն. Հետապնդում են մարդու իրավունքների և խաղաղության պաշտպանության համար, Առաջադիմական հասարակական-քաղաքական, գիտական և այլ ստեղծագործական գործունեության համար, կամ եթե նրա կյանքին կամ առողջությանը վտանգ է սպառնում:

51. Վրաստանի կառավարությունը նշում է, որ հաշվետու ժամանակաընթացքում չի եղել օտարերկրացու արտաքսման, տեղահանության, վերադարձի կամ հանձնման կամ մերժման այլ ակտ այն երկրներ, որտեղ նրանց սպառնում է ֆիզիկական կամ բարոյական անվտանգության սպառնալիք: 2001 թվականին, Վրաստանը կատարեց չեչեն ծագման Ռուսաստանի քաղաքացիների էքստրադացիա, ովքեր որոնվում էին ռուսական իրավապահ ծառայությունների կողմից: Չեչեն ծագման տասներեք անձինք, ովքեր եղել էին էքստրադացիայի ընթացակարգի սուբյեկտներ,

ներկայացրեցին հայց մարդու իրավունքների եվրոպական դատարանին: Տասներեք հոգուց, ովքեր ենթակա էին էքստրադացիայի, միայն չորսի հանձնումը կատարվեց Ռուսաստանի Դաշնությանը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշեց Վրաստանի կողմից մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիայից բխող պարտականությունների խախտում:<sup>16</sup> Դրանից հետո, Վրաստանն իրականացրեց նշանակալից օրենսդրական փոփոխություններ, ինչպիսիք են, էքստրադացիայի վերաբերյալ գլխավոր դատախազի որոշումը դատարանում բողոքարկելու ճիշտ ընթացակարգի սահմանում, էքստրադացիայի ընթացիկ ընթացակարգի վերաբերյալ ձեռքարկվածին իրազեկելու պարտականության պարզ

---

<sup>15</sup> Դրա հետ միասին, «Օտարերկրացիներին Վրաստանից արտաքսման կարգի մասին» դրույթի հաստատման վերաբերյալ Վրաստանի նախագահի 2006 թվականի հուլիսի 28-ի №401 հրամանագիրը ուղղակի որոշում է տեղահանության ընթացակարգը:

<sup>16</sup> Տես՝ Շամաեվ և 12 այլ անձ Վրաստանի և Ռուսաստանի դեմ, հայտ՝ №36378/02, 2005 թվականի ապրիլի 12:

որոշում և այլն: Դրա հետ միասին, Վրաստանը համարժեքորեն գործադրեց վերոհիշյալ որոշումը ինչպես անհատական, այնպես էլ ընդհանուր միջոցառումների մասում: Ինչը ենթադրում է այն, որ Վրաստանը վճարեց փոխհատուցում գոհերին, վերացրեց գլխավոր դատախազի տեղակալի որոշումը 9 անձի էքստրադացիայի վերաբերյալ և բարելավեց էքստրադացիայի իրավական բազան: Ավելին, միջազգային չափորոշիչներին համապատասխան (այդ թվում XXII ընդհանուր հանձնարարականին համապատասխան), 2006 թվականի հուլիսին փոխվեց ՔՕ և պարզորոշ արգելվեց այն անձանց էքստրադացիան, ովքեր օգտվում են քաղաքական ապաստանից կամ ունեն տարհանվածի կարգավիճակ:

### **Տարհանվածների և ապաստան որոնողների իրավական պաշտպանություն**

52. Վրաստանի օրենսդրությունում վերջին ժամանակաշրջանում իրականացված փոփոխություններին համապատասխան<sup>17</sup> տարհանվածներին տրվում է ուղևորական փաստաթուղթ, ինչպես դա նախատեսված է տարհանվածների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայով: Ուղևորական փաստաթղթերը տարհանվածներին տալիս են հնարավորություն շրջագայելու Վրաստանի տարածքում, ինչպես նաև երրորդ/օտար երկրում:

**Վրաստանում տարհանվածի կարգավիճակ ունեցող անձանց**

**վիճակագրություն (2009)**

---

<i>Երկիր</i>	<i>Թվաքանակ</i>
Թուրքիա	1
Ռուսաստան	856
Իրաք	5
Թուրքմենստան	2
Իրան	1
Տաջիկստան	2
<b>Ընդամենը.</b>	<b>867</b>

<sup>17</sup> «Վրաստանի քաղաքացիների և Վրաստանում բնակվող արտասահմանցիների հաշվարկի, ինքնության (բնակության) վկայականի և Վրաստանի քաղաքացու Անձնագրի տրման կարգի մասին» Վրաստանի օրենքում 2008 թվականի մարտի 21-ի № 5973 փոփոխություններ և լրացումներ:

53. Վրաստանում տարհանվածների ամենամեծ խումբը չեչնական ծագում ունի: Նրանց պահանջմունքները բավարարելու նպատակով, կառավարությունն աշխատում է նրանց հիմնախնդիրների երկարաժամկետ կարգավորման վրա: Ներկայումս, տարհանվածների և վերաբնակության նախարարությունը, այլ միջազգային ինստիտուտների հետ միասին, իրականացնում է նախագիծ՝ «Տարհանվածի ծննդյան գրանցում և հպատակագրում» նրանց սոցիալական ծառայության և պաշտպանության մատչելիության բարելավման համար»: Այլ հարցերի շրջանում, նախագծի նպատակն է օգնություն ցուցաբերել տարհանվածներին Վրաստանի քաղաքացիություն ստանալու մեջ: Դրա հետ միասին նախագծերը, որոնք իրականացվում են ՄԱԿ-ի և Նորվեգիայի տարհանվածների խորհրդի ֆինանսական աջակցությամբ, նպատակաուղղված են չեչեն տարհանվածների Վրաստանում քաղաքացիական ինտեգրման աջակցությանը:<sup>18</sup>

54. Տարհանվածների մասին 1998 թվականի օրենքում բացթողումների հայտնաբերումից հետո, Վրաստանի կառավարությունը պատրաստեց տարհանվածների և ժամանակավոր ապաստան որոնողների մասին օրինագիծ: Օրինագիծը այլ հարցերի հետ միասին, ընդարձակում է տարհանվածին կարգավիճակ շնորհելու շրջանակները, սահմանում է ապաստան տալու պարզ ընթացակարգերը: Տարհանվածների և վերաբնակեցման նախարարությանը 2009 թվականին փորձաքննական օգնություն ցուցաբերեց ՄԱԿ-ի տարհանվածների գերագույն կոմիսարը և օրինագծի վերջնական տարբերակը մոտ ապագայում կառաքվի Վրաստանի խորհրդարան:

**Թ. 5-ԲԴ ՀՈՂՎԱԾԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ  
ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ**

55. Կրոնի հետ կապված հարցերը կոմիտեի համար կարևոր են ազգային և ռասսայական խտրականության համատեքստում: Կոմիտեն, խոստովանելով պետության կողմից անցկացված միջոցառումները ազգային-կրոնական բռնությունը արմատախիլ անելու համար, վերստին մնում է զարմացած առանձնապես եզիդ-քրդերի ազգային-կրոնական փոքրամասնության իրավիճակի կապակցությամբ:

**Կոմիտեն հանձնարարական է տալիս անդամ պետությանը, պարբերական հրատարակությունում մատնացույց անել մանրամասն տեղեկություն ազգային-կրոնական փոքրամասնությունների խմբերի իրավիճակի մասին, ինչպես նաև ընդունել ակտ նրանց**

---

<sup>18</sup> Օրինակ, 2006-08 թվականներին, Նորվեգիայի տարհանվածների խորհուրդն իրականացրեց եկամուտ բերող 48նախագիծ, որոնց ընդհանուր բյուջեն կազմեց 350,226 լարի:

**իրավունքների և ազատությունների մասին, կարծիքի և կրոնի ազատ արտահայտման կապակցությամբ, որպեսզի փոքրամասնությունների խմբերը պաշտպանված լինեն ամեն տեսակ խտրականությունից, իսկ առանձնապես բռնությունից:**

56. Կրոնի ազատությունը սահմանադրական ազատություն է և այն պաշտպանված է օրենքով:<sup>19</sup> ՔՕ-թյամբ հանցագործություն է հայտարարված կրոնական իրավունքների կատարման անօրեն խոչընդոտումը, այդ թվում՝ հոգևոր ծառայության կամ այլ կրոնական կարգի կամ սովորական ծիսակատարության անօրեն խոչընդոտումը բռնությամբ կամ բռնության սպառնալիքով, կամ էլ էթե դա ուղեկցվում է հավատացյալի կամ Աստծո սպասավորի կրոնական զգացումների անպատվությամբ (ՔՕ-թյան 155-րդ Հոդված): Նույնպես ՔՕ 156-րդ Հոդվածի համաձայն, հանցագործություն է հայտարարված մարդու հետապնդումը դավանանքի, հավատի կամ համոզմունքի պատճառով: Վերը նշված երկու Հոդված ներկայացնում են իրավական պաշտպանության հիմք կրոնական փոքրամասնությունների խտրականությունը խափանելու համար:

57. Նշանակալից միջոցառումներ իրականացվեցին դպրոցների մակարդակով աշակերտների շրջանում կրոնական խտրականությունից խուսափելու նպատակով: Ազգային ուսումնական պլանների համաձայն, որը 2006 թվականին ընդունվեց, կրոնի պատմությունն ընտրովի առարկա է:

Նշված առարկան ընթերցվում է որպես քաղաքական գիտությունների մաս և այն պարունակում է հետևյալ հարցերը. Կրոնների առաջացում/ձևավորում, հասարակությունում կրոնի դերը, աշխարհի տարբեր կրոնները և այլն: Շատ կարևոր է այն, որ պետությունն արգելում է դպրոցներում որևէ տեսակի կրոնական ծիսակատարության և կարգի կատարում կամ որևէ կրոնական խորհրդանշանի կիրառում, բացի ուսուցման նպատակից:

58. Ուսուցիչների մասնագիտական բարոյագիտության օրենսդրությունը պարտավորեցնում է ուսուցիչներին ստեղծել այնպիսի միջավայր, որը նպաստի աշակերտների անհատական անձնականության լրիվ զարգացմանը և նրանց իրավունքների և ազատությունների պաշտպանությանը: Օրենսդրությունն ամրապնդում է իրավունքների վրա հաստատված արժեքների և սկզբունքների քարոզման գործում ուսուցիչների դերը և նմանապես արգելում է աշակերտների խտրականությունը ազգային ծագման կամ կրոնական պատկանելության հիման վրա:

<sup>19</sup> Վրաստանի Սահմանադրության 19-րդ Հոդվածի համաձայն, «Յուրաքանչյուր մարդ ունի խոսքի, կարծիքի, խղճի, դավանանքի և հավատքի ազատություն: Անթույլատրելի է մարդու հետապնդումը խոսքի, կարծիքի, դավանանքի կամ հավատի պատճառով, ինչպես նաև նրա հարկադրումը արտահայտելու իր մտեցումը դրանց մասին»:

#### **Ժ. 5-ԲԴ ՀՈՂՎԱԾԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՀԱՆՁՆԱԴԱՐԱԿԱՆՆԵՐ**

59. Աղքատությունը հիմնադրությային հարց է մարդու իրավունքների համատեքստում, քանզի այն վտանգի տակ է դնում ամեն տեսակի, իսկ առանձնապես մուրացիկ խմբերի կողմից իրենց իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Կոմիտեն զարմացած է այն ծայրագույն աղքատությամբ, որի պայմաններում ստիպված է ապրել կողմ պետության բնակչության մեծամասնությունը, իսկ առանձնապես ողորմացող խմբերը և սրտացավություն է արտահայտում, որ աղքատության կրճատման պետական ծրագիրը դարձյալ չի ընդունվել:

Կոմիտեն հանձնարարական է տալիս անդամ պետությանը, պարբերական զեկուցման մեջ ճշգրտությամբ նկարագրել իր տնտեսական, իսկ առանձնապես փոքրամասնության խմբերի իրավիճակը և ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի կրճատվի աղքատությունը, առանձնապես փոքրամասնությունների խմբերում և օժանդակի տնտեսական զարգացմանը, այդ թվում ազգային գործնական պլան ընդունելով:

60. Վրաստանում աղքատության կրճատումը Վրաստանի կառավարության հիմնական գերակայություններից մեկն է: Այս տեսակետից, կարևոր միջոցառումներից մեկն է «Հազարամյակի

մարտահրավեր Վրաստանին» հիմնադրամի ստեղծումը, որի բյուջեն 3953 միլիոն ԱՄՆ դոլար է կազմում: Հիմնադրամի նպատակն է Վրաստանի տարածաշրջաններում աղքատության կրճատումը և տնտեսական զարգացումը: Դրա իրականացումը նպաստում է ենթակառուցյի վերակենդանացմանը և արտադրության զարգացմանը:

61. Ազգային փոքրամասնությունների շրջանում գոյություն ունեցող խնդիրները կարգավորելու համար, Հազարամյակի մարտահրավեր ծրագրի շրջանակներում իրականացվեցին հետևյալ նախագծերը.

- Էներգիայի ենթակառուցյի վերակենդանացման նախագիծ (բյուջեն 49.5 միլիոն ԱՄՆ դոլար) վնասված Հյուսիս-Հարավ խողովակատարի վերականգնման նպատակով, նախագիծը նախատեսում է 22 օբյեկտի վերականգնում: Համապատասխանաբար, էներգիա մատակարարելու անվտանգությունը և հուսալիությունը ավելացնում է գազի պաշարը էլեկտրակայաններում և արդյունաբերական սեկտորը դարձնում է ավելի հուսալի,
- Սամցխե-Ջավախեթի ճանապարհի վերականգնում (բյուջեն 203,515,000 ԱՄՆ դոլար) լայնամասշտաբ նախագիծ, որի նպատակն է ճանապարհի և տրանսպորտային ցանցի վերականգնում Սամցխե-Ջավախեթի և Քվեմո Քարթլիի տարածաշրջաններում: Ճանապարհի վերականգնումը նպաստում է ազգային փոքրամասնություններով բնակեցված այս երկու տարածաշրջանների կապին Վրաստանի մյուս տարածաշրջանների հետ:
- Ագրոբիզնեսի զարգացման նախագիծը (բյուջեն 15,250.000 ԱՄՆ դոլար) նախատեսում է դրամաշնորհների տրամադրում ինքնաֆինանսավորման և մրցակցության հիման վրա, որպեսզի Վրաստանի բոլոր շրջաններում զարգանա առաջնային արտադրությունը, ստեղծվեն ֆերմերային տնտեսության ծառայության կենտրոններ, հավելյալ արժեքների արտադրության և արժեքների համակարգեր: Նախագիծը նպաստում է ագրոբիզնեսի զարգացմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը նաև ազգային փոքրամասնությունների համար:
- 

#### **Ի. 5-ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԱՎՅՈՒԹՅԱՄԲ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՀԱՆՁՆԱԲԱՐԱԿԱՆՆԵՐ**

62. Կոմիտեն զարմացած է ինքնակամ ձերբակալությունների, իրավապահ մարմինների կողմից չափազանցված ուժի գործադրման և ազատության սահմանափակման տեղերում անհամապատասխան վերաբերմունքի փաստերից, որոնք ուղղված են փոքրամասնությունների խմբերի և քաղաքացիություն չունեցող անձանց դեմ: Նմանապես, ցավալի է նման փաստերի անհամապատասխան հետաքննության վարույթը:

Կոմիտեն հանձնարարական է տալիս կողմ պետությանը, ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի արմատախիլ արվի իրավապահ մարմինների կողմից ոչպատշաճ վերաբերմունքը, ապահովվի արագ, արդյունավետ, անկախ և անկողմնակալ հետաքննություն՝ փոքրամասնությունների խմբերի և քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքները

պաշտպանելու համար: Հանցագործները պետք է դատվեն և պատժվեն, իսկ զոհերին տրվի փոխհատուցում:

### Օրենսդրական բազա

63. 2005 թվականին օրենսդրական փոփոխություններ իրականացվեցին ՔՕ 144-րդ Հոդվածում, որը վերաբերում է հալածանքին, հալածանքի սպառնալիքին և ստորացնող և անմարդկային վերաբերմունքին: 144-րդ Հոդվածը սահմանում է հալածանքը որպես «անձին, նրա մոտ բարեկամի կամ նրանից նյութապես կամ այլ կերպ կախվածության անձի համար այնպիսի պայմանների ստեղծում կամ այնպիսի վերաբերմունք, որն իր բնույթով, ինտենսիվությամբ կամ տևողությամբ առաջացնում է ուժեղ ֆիզիկական ցավ կամ հոգեբանական կամ բարոյական տանջանք և որի նպատակն է տեղեկատվության, ապացույցի կամ խոստովանության ընդունում, անձի վախեցնում կամ հարկադրում կամ էլ անձի պատժում նրա կամ երրորդ անձի կողմից կատարված կամ հավանաբար կատարված արարքի համար»: Ավելի բարձր սանկցիա, 12-ից մինչև 17 տարի ազատազրկում (7-ից մինչև 10 տարի ժամկետի համեմատությամբ) նախատեսված է նույն հանցանքի համար, եթե այն իրագործված է աստիճանավորի կամ նրան հավասարեցված անձի կողմից (Հոդված 144 (2) (ա) կամ ծառայական վիճակի կիրառմամբ (Հոդված 144 (2) (բ): 144-րդ Հոդվածն արգելում է հալածանքներով սպառնալիքը և նախատեսում է դրա համար սանկցիայի տեսքով տուգանք կամ ազատազրկում մինչև 2 տարի ժամկետով: 144-րդ Հոդվածը նաև արգելում է անմարդկային և ստորացնող վերաբերմունքը կամ պատիժը և նախատեսում է ավելի բարձր սանկցիա (4 տարուց մինչև 6 տարի ժամկետով ազատազրկում), եթե այն կատարվել է աստիճանավորի կամ նրան հավասարեցված անձի կողմից կամ ծառայական վիճակի կիրառմամբ:

### Բնստիտուցիոնալ զարգացում

64. Մարդու իրավունքների պաշտպանության և մոնիթորինգի ծառայություններ են ստեղծվել իրավապաշտպան գերատեսչություններում, մասնավորապես, ներքին գործերի նախարարությունում, Վրաստանի գլխավոր դատախազության աշխատակազմի և պատժակատարողականության, պրոբացիայի և իրավաբանական օգնության հարցերով նախարարությունում: Այս ծառայությունների հիմնական պարտականություններից մեկն է մարդու իրավունքների պաշտպանության համակարգի ներքին մոնիթորինգի ապահովումը և մարդու իրավունքների ազգային և միջազգային չափորոշիչների կատարման վերահսկողության իրականացումը: Նշված ծառայությունները ներկայացնում են ինչպես անհատական, այնպես էլ համակարգային հիմնախնդիրների ժամանակին և համարժեք կարգավորման արդյունավետ միջոց:

65. Բացի մարդու իրավունքների ծառայություններից, Վրաստանի նախագահի 2007 թվականի հունիսի 20-ի №369 հրամանագրով ստեղծվեց մարդկանց հալածանքների, ոչնչարդասիրական, սաստիկ կամ հարգանքը և արժանապատվությունը վարկաբեկող վերաբերմունքի կամ պատժի դեմ ուղղված միջոցառումների իրականացման միջգերատեսչական համակարգող խորհուրդ: Խորհրդի անդամները կառավարության բարձրպաշտոնյա անձինք են, միջազգային և ոչկառավարական կազմակերպությունների և անկախ փորձագետներ: Խորհրդի գործառույթը ներկայացնում է հալածանքի, ոչնչարդասիրական, սաստիկ կամ հարգանքը և արժանապատվությունը վարկաբեկող

վերաբերմունքի կամ պատժի մասին ամենամյա գործնական պլանի իմպլեմենտացիան և մոնիթորինգը:

#### **Հալածանքների զոհերի փոխհատուցում**

66. Հալածանքների զոհերի կողմից փոխհատուցում ստանալու ընթացակարգը սահմանված է Վրաստանի քաղաքացիական օրենսդրությամբ: Քաղաքացիական օրենսդրության համապատասխան, մարմնական վնասվածքի կամ առողջությանը վնաս հասցնելու դեպքում, զոհը կարող է պահանջել վնասի հատուցում: Դրա հետ միասին, օրենսդրության 1005-րդ Հոդվածը նախատեսում է պետության պատասխանատվություն այն դեպքում եթե վնասը առաջացել է պետական ծառայողի մտադրված կամ կոպիտ անզգուշությամբ: 2009 թվականին, փոխհատուցում հալածանքի զոհին տրվեց միայն մեկ դեպքում: 2007 թվականին, Թբիլիսիի քաղաքային դատարանի քրեական գործերով կոլեգիան դատապարտեց 7 և 8 տարով ազատազրկման ներքին գործերի նախարարության նախկին երկու աշխատակցի հալածանքի հանցանքի համար, որը նրանք կատարել են 2003 թվականին: 2009 թվականին, դատարանի որոշման հիման վրա, ներքին գործերի նախարարությունը և մեղավորները զոհին վճարեցին փոխհատուցում 9,000 լարիի չափով:

#### **Իրավապաշտպան գերատեսչությունների ներուժի ուժեղացում**

67. Ներքին գործերի նախարարության կողմից ուժի կիրառման մասին ստացած ձեռնարկը ներկայացնում է լրացուցիչ պաշտպանություն անպատշաճ վերաբերմունքից: Ներքին գործերի նախարարության ոստիկանության ակադեմիան, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի կառավարությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ, մշակեց ուժի գործադրման մասին ձեռնարկ: Դասընթացը պարունակում է ագրեսիվ կասկածյալներին դիմակայելիս, նվազագույն անհրաժեշտ ուժի կիրառման, բռնություն/դիմադրությունն արմատախիլ անելիս ուժի էսկալացիայի, հարկադրման հետ կապված մարդու իրավունքների պաշտպանության, հրազենի կիրառման և բացարձակ անհրաժեշտության հարցերը: Զուգահեռաբար, ոստիկանության ակադեմիա ընդունված կուրսանտների համար պատրաստվեց վարժանք-մոդուլ: Ձեռնարկը դասավանդվում է որպես բազիսային դասընթացի պարտադիր մաս, և այն մարդու իրավունքներ առարկայի նշանակալից ավելացում է, որը կազմում է ողջ դասընթացի 15%-ը:

#### **Լ. 6-ԸՆԴՀԱՆՈՒՄ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՀԱՆՁՆԱԴԱՆՆԵՐ**

68. Չնայած այն բանին, որ օմբուդսմենի օֆիսի գոյությունը դրական է գնահատված, կոմիտեն անհանգստություն է արտահայտում, որ ոչլրիվ տեղեկություն է հաղորդվել այս ինստիտուտի իրավագործության, արդյունավետության և անկախության կապակցությամբ:

Կոմիտեն հանձնարարական է տալիս պետության կողմին, որ պարբերական հաշվետվության մեջ նշվի մանրամասն տեղեկություն օմբուդսմենի արդյունավետության, իրավագործության և ձեռքբերումների մասին: Դրա հետ միասին, կոմիտեն կոչ է անում կողմ պետությանը, ուժեղացնել այս ինստիտուտը, ապահովել անհրաժեշտ ռեսուրսներով, որպեսզի օմբուդսմենի օֆիսը, որպես մարդու իրավունքների պաշտպանության անկախ մարմին, կարողանա պատշաճորեն գործել՝ Փարիզի սկզբունքներին և ՄԱԿ-ի 48/134 որոշմանը համապատասխան:

69. Վրաստանի ժողովրդական պաշտպանի աշխատակազմը ստեղծվեց Փարիզի սկզբունքներին համապատասխան 1996 թվականի մայիսի 16-ին №230 օրգանական օրենքի հիման վրա: Ժողովրդական պաշտպանն անկախ է իր գործառնությունները կատարելիս և այն ընտրված է Վրաստանի խորհրդարանի կողմից 5 տարվա ժամկետով, որի առջև այն հաշվետու է:<sup>20</sup> Ժողովրդական պաշտպանի աշխատակազմի մանդատն ընդարձակ է և այն պարունակում է մարդու իրավունքների և ազատությունների լայն տեսադաշտ: Առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում ժողովրդական պաշտպանի աշխատակազմի՝ մարդու իրավունքների մոնիթորինգի գործառնություն և նրա լիազորությանը՝ հետաքննելու անհատական բողոքները (ներկայացված դիմումների և բողոքների հիման վրա կամ իր նախաձեռնությամբ):<sup>21</sup> Մասնավորապես, ժողովրդական պաշտպանի աշխատակազմն իրականացնում է Վրաստանում ազատագրված բոլոր հիմնարկությունների կանոնավոր ստուգում:<sup>22</sup> Մարդու խախտված իրավունքները վերականգնելու համար ժողովրդական պաշտպանն ուղարկում է հանձնարարականներ պետական հիմնարկություններին և այն մարմիններին, որոնց գործողությունն էլ առաջ է բերել մարդու իրավունքների խախտում և ամեն վեց ամիսը մեկ ուղարկում է հաշվետվություն Վրաստանի խորհրդարանին՝ Վրաստանում մարդու իրավունքների իրավիճակի մասին:<sup>23</sup>

70. Վերջին ժամանակաշրջանում իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում,<sup>24</sup> ժողովրդական պաշտպանի աշխատակազմը սահմանվեց որպես հալածանքի դեմ Կոնվենցիայի ֆակուլտատիվային արձանագրությամբ նախատեսված նախագուշակական ազգային մեխանիզմ:<sup>25</sup>

-----  
<sup>20</sup> Supra ծանոթագրություն 17, Հոդված 6 (2):

<sup>21</sup> «Վրաստանի ժողովրդական պաշտպանի մասին» Վրաստանի օրգանական օրենք, 12-րդ և 13-րդ Հոդվածներ:

<sup>22</sup> Այստեղ ևեթ, 19-րդ (2) Հոդված:

<sup>23</sup> Այստեղ ևեթ:

<sup>24</sup> «Վրաստանի ժողովրդական պաշտպանի մասին» Վրաստանի օրգանական օրենքում 2009 թվականի հուլիսի 16-ին իրականացված №1462 փոփոխություն:

<sup>25</sup> Մանրամասն տեղեկության համար տես՝ UNCHR-ի կայք էջը

(<http://www2.ohchr.org/english/bodies/cat/opcat/mechanisms.htm>): Ժողովրդական պաշտպանի աշխատակազմը ներկայացրեց հաշվետվություն հալածանքի խափանման ենթակամիտեին, որտեղ նկարագրված են Վրաստանի կառավարության կողմից իրականացված օրենսդրական և ինստիտուցիոն միջոցառումներ հալածանքի և այլ սաստիկ, անմարդկային կամ ստորացնող վերաբերմունքի դեմ պայքարում:

71. Հատկանշական է, որ բացի ազգային փոքրամասնությունների խորհրդից և կրոնական խորհրդից, ժողովրդական պաշտպանի աշխատակազմը 2001 թվականին ստեղծեց երեխաների իրավունքների պաշտպանության կենտրոն և 2008 թվականին՝ սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կենտրոն:

---

**Խ. 6-ԸՆԴՅՈՒՆ 7-ԸՆԴՅՈՒՆ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՍԲ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ  
ՀԱՆՁՆԱԴՐԱԿԱՆՆԵՐ**

72. Չնայած այն բանին, որ Կոնվենցիային շնորհիվ է ազգային դատարանների առջև ուղղակի գործելու ուժ, կոմիտեն անհանգստություն է արտահայտում ռասսայական խտրականության մասին գոյություն ունեցող հայցերի վերաբերյալ տեղեկության սակավության, ռասսայական խտրականության հարցով դատական վեճերի բացակայության պատճառով և ընդգծում է այս հարցի մասին պետական կառույցներում տեղեկություն տարածելու անհրաժեշտությունը:

Կոմիտեն հանձնարարում է, որ կողմ պետությունը համապատասխան միջոցառումներ անցկացնի, որպեսզի ռասսայական խտրականության վերաբերյալ գործերի սակավությունը առաջացած չլինի փոքրամասնությունների խմբերի ոչիրազեկվածությամբ կամ ֆինանսական ռեսուրսների բացակայությամբ, անհատների անվստահությամբ ոստիկանության կամ դատական մարմինների նկատմամբ, պաշտոնական մարմինների կողմից ուշադրության նվազությամբ կամ ռասսայական

խտրականության գործերի սենսիտյուրությամբ: Կոմիտեն կոչ է անում կողմ պետությանը, ազգային օրենսդրությամբ ապահովել Կոնվենցիայի նորմերի արդյունավետ պահպանումը, դրա հետ միասին կատարել տեղեկության տարածում իրավապաշտպան միջոցների վերաբերյալ: Դրա հետ միասին, կոմիտեն կոչ է անում կողմ պետությանը, ձեռնարկել միջոցներ ոստիկանության և դատական մարմինների աշխատակիցների գիտակցությունը Կոնվենցիայի հոդվածների նկատմամբ բարձրացնելու ուղղությամբ:

### **Գիտակցության բարձրացում**

73. Ազգային փոքրամասնությունների իրավական հարցերով գոհերի իրավունքների գիտակցության բարձրացման կապակցությամբ, ժողովրդական պաշտպանի աշխատակազմին կից գործող ներդրամտության կենտրոնը ստանձնեց ցանկացած համապատասխան անձին օգնություն ցուցաբերելու խնդիրը, ինչպես նաև կառավարության և ազգային փոքրամասնությունների միջև խորհրդատվություններին և երկխոսության աջակցությունը: 2009 թվականին, ազգային փոքրամասնությունների խորհուրդը տպագրեց բրոշյուրներ, որոնք պարունակում էին տեղեկություն փոքրամասնությունների հարցերի և ազգային փոքրամասնությունների խորհրդի գործունեության մասին: Ազգային փոքրամասնությունների խորհրդի մանդատի մասին տեսք 9-րդ պարագրաֆը վերևում:

74. Զուգահեռաբար, իրավաբանական օգնության ծառայությունը պատշաճորեն նշում է ազգային փոքրամասնությունների խորհրդատվությունը իրենց իրավունքների մասին իր բյուրոների և խորհրդատվական կենտրոնների միջոցով: Վերջերս, իրավաբանական օգնության ծառայությունը բյուրո բացեց Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում և պլանավորվում է Ախալքալաքում խորհրդատվական կենտրոնի բացում՝ տարածաշրջանում բնակվող ազգային փոքրամասնություններին ծառայելու նպատակով:

75. Դրա հետ միասին, կառավարությունը գիտակցում է, որ օրենսդրական նախաձեռնությունների մասին տեղեկությունը հրապարակավ մատչելի պետք է լինի ազգային փոքրամասնությունների համար: Այդպիսի նորություններից մեկն է իրավական գործընթացային օրենսդրությունը, որն ուժի մեջ մտավ 2010 թվականի հոկտեմբերին: Այս ուղղությամբ, իրավաբանական օգնության ծառայությունն արդեն պլանավորում է հասարակության գիտակցության բարձրացման պատշաճ գործընթացի իրականացում և տեղեկատվական բրոշյուրների հրապարակում աղբյուրներեն, հայերեն և ռուսերեն լեզուներով: Այս բրոշյուրները կօգնեն ազգային փոքրամասնություններին լինել իրազեկված իրենց իրավական իրավունքների/պարտականությունների մասին և ստանան տեղեկատվություն Վրաստանի Քրեական Օրենսադրությամբ նախատեսված իրավական միջոցների մասին:

### **Իրավապահ գերատեսչությունների ներկայացուցիչների մասնագիտական վարժանք**

76. Խտրականության դեմ պայքարում հատուկ ուշադրություն է հատկացվում համապատասխան աստիճանավորների վարժանքին մարդու իրավունքների ոլորտում: Այս վարժանքների նպատակն է ոչ միայն իրավապահների որակավորման բարձրացումը, այլև նրանց պարտականությունների և պատասխանատվության աճը մարդու իրավունքների հարցերի նկատմամբ: Օրինակ, ոստիկանության ակադեմիայում բազիսային նախապատրաստական կուրսի 10 ակադեմիական ժամ

հատկացված է մարդու իրավունքներին և առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում ռասսայական հանցագործությունների որակավորմանը, Ռասսայական հիմքի վրա կատարված հանցագործությունների ողջ շարք են պարունակում նաև այլ կուրսերը: Ակադեմիայի ուսանողները նաև անցնում են վարժանք այն հանցագործությունների հետաքննության կապակցությամբ, որոնք մոտիվացված են ռասսայական խտրականությամբ: Նույնպես պետք է նշել, որ ոստիկանության ակադեմիան առաջարկում է դասընթացներ ոստիկանության բարոյագիտության օրենսդրության և հասարակությանը կողմնորոշված ոստիկանության մասին, որոնք ներառում են ազգային, ռասսայական և կրոնական փոքրամասնությունների հետ հարաբերության հարցերը և այն գործոնները, որոնք պետք է ի նկատի առնվեն ազգային, ռասսայական և կրոնական փոքրամասնությունների հետ հարաբերության ժամանակ, ինչ միջոցներով պետք է խուսափել ստերեոտիպ ենթադրություններից, հիմնախնդիրներից, որոնք կապված են ազգային, ռասսայական և կրոնական փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջանում հանցագործությունների խափանման հետ:

2 743 ոստիկանության սպա անցավ վարժանք դրա սկսվելուց մինչև օրս

<i>Կուրսի անվանում</i>	<i>թվական</i>	<i>Մասնակիցների թվաքանակ</i>
1 Շրջանի տեսուչների բազիսային նախապատրաստական դասընթաց	2008	952
2 Պարեկային ոստիկանության բազիսային նախապատրաստական դասընթաց	2008	73
3 Աստիճանավորների վերապատրաստման դասընթացներ	2008	74
4 Շրջանի տեսուչների բազիսային նախապատրաստական դասընթաց	2007	986
5 Պարեկային ոստիկանության բազիսային նախապատրաստական դասընթաց	2007	173
6 Աստիճանավորների վերապատրաստման դասընթացներ	2007	97
7 Շրջանի տեսուչների բազիսային նախապատրաստական դասընթաց	2006	163
8 Պարեկային ոստիկանության բազիսային նախապատրաստական դասընթաց	2006	225
<b>Ընդամենը`</b>		<b>2 743</b>

77. Վրաստանի արդարադատության նախարարության վարժանքի կենտրոնն անց է կացնում խորացված վարժանք ծրագրեր դատախազների համար: Վարժանքի ուսումնական պլանը ընդգրկում է տարբեր հարցեր և այն պարունակում է վարժանք մարդու իրավունքներից, այդ թվում՝ փոքրամասնությունների իրավունքները: 2009 թվականի ապրիլի 25-27-ին անցկացվեց սեմինար՝ հանցագործությունների տարբեր տիպերի նկատմամբ խտրականությունը արգելելու մասին, մասնավորապես, ռասսայական և ազգային խտրականությունն արգելելու, կրոնական խտրականությունն արգելելու մասին: Ամբողջությամբ 75 դատախազ և քննիչ մասնակցեց սեմինարին, որն անցկացրեցին Եվրոպայի խորհրդի փորձագետները:

### **Բարոյագիտության օրենսդրություն**

78. Վրաստանի գլխավոր դատախազի աշխատակազմում և Վրաստանի ներքին գործերի նախարարությունում գոյություն ունեն բարոյագիտության օրենսդրություններ, որոնք սահմանում են որոշակի չափորոշիչներ, որոնք առանձնապես կարևոր են հասարակական շահերի տեսակետից: Օրենսդրության նպատակն է վարքի ավելի բարձր չափորոշիչի սահմանում աստիճանավորների պատասխանատվության ուժեղացման գործընթացին աջակցության և հավասարության սկզբունքի արմատավորման համար, պաշտոնական պարտականությունների արդարացի, արդյունավետ, անկողմնակալ և արհեստավարժ կատարման ամրապնդում, արդարադատության առանց պայմանի և արդյունավետ կատարման բարելավում, աստիճանավորների կողմից օրենքի առանց պայմանի պահպանության ամրապնդում, մարդու իրավունքների պաշտպանություն՝ միջազգայնորեն ճանաչված չափորոշիչներին համապատասխան: Բարոյագիտության օրենսդրություններն առանձնահատուկ ուշադրություն են սևեռում խտրականության արգելման վրա: Դրա կոնկրետ դրույթների համաձայն, աստիճանավորները պետք է նպաստեն ամեն տեսակ խտրականության վերացման գործընթացին:

## **III. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԻՄՊԼԵՄԵՆՏԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ**

### **Ա. 2-ԸՂ ՀՈՂՎԱԾ**

79. Ազգային օրենսդրության ոչ մի դրույթ կամ ինստիտուտ թույլ չի տալիս ռասսայական խտրականություն Վրաստանում, քանզի այն հակադրվում է Վրաստանի Սահմանադրության 14-րդ Հոդվածով ճանաչված ֆունդամենտալ իրավունքների սկզբունքին և այլ համապատասխան օրենքներին: Ստորև տրված է հաշվետվություն Վրաստանի կողմից խտրականության դեմ պայքարի նպատակով իրականացված տարբեր դրական քայլերի մասին, այդ թվում, տեղեկություն ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և գործնական պլանի վերաբերյալ: Հարկավոր է ընդգծել այն, որ Վրաստանը՝ ինչպես պետությունը, այնպես էլ նրա կառավարությունը երբեք չի աջակցել կամ իրականացրել այնպիսի միջոցառումներ, ինչը կապված է ռասսայական խտրականության հետ: Վրաստանը բազմիցս հաստատել է իր անհողդողդ դիրքորոշումը ռասսայական խտրականության ակտերի, քսենոֆոբիայի և անհանդուրժողականության կապակցությամբ:<sup>26</sup>

### **Բ. 3-ԸՂ ՀՈՂՎԱԾ**

80. Վրաստանը նշում է, որ Վրաստանում երբեք տեղ չի գտել ռասսայական սեգրեգացիայի և ապարտեիդի իրականացումը: Դրա հետ միասին, 2005 թվականի մարտի 11-ին, Վրաստանը միացավ ապարտեիդի հանցագործությունը խափանելու և այն պատժելու մասին կոնվենցիային: Կոնվենցիայի IV Հոդվածի համաձայն, Կոնվենցիայի մասնակից պետությունները ստանձնում են պարտականություն ընդունելու օրենսդրական կամ այլ տեսակի բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են այնպիսի գործողությունները խափանելու և նաև ապարտեիդի հանցագործության աջակցության և ապարտեիդի նման սեգրեգացիոն քաղաքականությունից կամ նրա արտահայտություններից խուսափելու և այն դեմքերին պատժելու նպատակով, որոնք մեղավոր են այս հանցագործությունը կատարելու մեջ: Նշվածի հաշվառումով, ՔՕ-ում հանցագործությունը մարդկայնության դեմ ձևավորվեց նոր դեֆինիցիտով:<sup>27</sup> Հատկանշական է, որ ՔՕ-թյան 411-րդ Հոդվածը (միջազգային մարդասիրական իրավական նորմերի խախտում) նույնպես ներառնում է ապարտեիդի հանցագործությունը:<sup>28</sup>

#### Գ 4-Ը ՀՈՂՎԱԾ

81. Այն հանցագործությունների թվարկության համար, որոնցում նախատեսված է ռասսայական խտրականությունը որպես հանցագործությունը ծանրացնող պարագա, տես՝ 15-րդ և 17-րդ պարագրաֆները վերևում:

82. 2008 թվականի ապրիլի 1-ին, Վրաստանը ստորագրեց Եվրոպայի խորհրդի Կոնվենցիան՝ կիրեռահանցագործության մասին: Կոնվենցիան ներկայացնում է հավելյալ

---

<sup>26</sup> Տես՝ օրինակ, Վրաստանի կառավարության բաժինը գլխավոր քարտուղարի հաշվետվությունը պատրաստելու մեջ, որը վերաբերում է Գլխավոր Ասամբլեայի 2006 թվականի դեկտեմբերի 19-ի A/61/149 որոշման իմպլեմենտացիային և որի անվանումն է. «Ռասիզմը, ռասսայական խտրականությունը», քսենոֆոբիան լրիվությամբ արմատախիլ անելու հետ կապված անհանդուրժողականության գործալային ջանքերը և Դուրբանի Հռչակագրի և գործնական ծրագրի համընդհանուր իմպլեմենտացիան և կատարումը»:

<sup>27</sup> Տես *supra* ծանոթագրություն 2, Մարդկայնության դեմ հանցագործության դեֆինիցիայի համար:

<sup>28</sup> ՔՕ-թյան 411-րդ (1) Հոդվածի «Ժ» ենթակետի համաձայն, միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի խախտումը միջազգային և ոչմիջազգային զինված հակամարտությունների ժամանակ, մասնավորապես, ապարտեիդի կամ ռասսայական խտրականության վրա հիմնված այլ ոչմարդասիրական գործողություն՝ պատժվում է 10-ից մինչև 15 տարի ազատազրկմամբ:

երաշխիք համակարգչային համակարգերի միջոցով իրականացված ռասսայական և քսենոֆոբիական բնույթ ունեցող ակտերի քրեաձիխության նկատմամբ: Ներկայումս պետական իշխանության մարմիններն աշխատում են նշված Կոնվենցիայի իմպլեմենտացիայի համար պահանջվող ազգային իրավական շրջանակի վրա:

#### Դ. 5-Ը ՀՈՂՎԱԾ

83. Վրաստանի օրենսդրությունը ներառնում է հետևյալ տեսակի հակախտրականության դրույթներ.

(ա) Քաղաքացիների քաղաքական միավորումների մասին օրենք, 3-րդ Հոդված՝ «Կուսակցություն ստեղծելու և գործելու հիմքում դրված է օրենքի առջև կուսակցությունների հավասարության սկզբունքը»,

(բ) Ընդհանուր վարչական օրենսդրություն, 4-րդ (1) Հոդված՝ «Բոլորը հավասար են օրենքի և վարչական մարմնի առջև»,

(գ) Վրաստանի քաղաքացիական օրենսդրություն, 1-ին Հոդված՝ «Անձանց հավասարության վրա հաստատված մասնավոր բնույթի գույքային, ընտանեկան և անձնական հարաբերություններ»,

(դ) Աշխատանքային օրենսդրություն, 2-րդ (3) Հոդված՝ «Աշխատանքային հարաբերությունում արգելվում է ցանկացած տեսակի խտրականությունը ռասայի, մաշկի գույնի, լեզվի, ազգային և սոցիալական պատկանելության, ազգության, ծագման, գույքային և դասային իրավիճակի, բնակության տեղի, տարիքի, սեռի, սեռական կողմնորոշման, սահմանափակ հնարավորությունների, կրոնական կամ այլ միավորումների պատկանելության, ընտանեկան վիճակի, քաղաքական և այլ հայացքների պատճառով»,

(ե) Հաղորդման մասին օրենք, 16-րդ Հոդված՝ «Հանրային հեռարձակումը պարտավոր է պատշաճ համաչափությամբ տեղադրել փոքրամասնությունների լեզվով փոքրամասնությունների կողմից պատրաստված ծրագրեր: Ինչպես նաև ծրագրերում արտացոլել հասարակությունում գոյություն ունեցող ազգային, մշակութային, լեզվական, կրոնական, տարիքային և գեներացիային բազմազանությունը»: Նշված օրենքը նաև պարտավորեցնում է թեմային հեռարձակման լիցենզիա ունեցողներին, որ ապահովեն իրենց սպասարկման գոտում բնակվող փոքրամասնությունների կարծիքների լուսաբանումը: Այս նույն օրենքի 33-րդ Հոդվածի 1 պրիմա մասին համապատասխան, հանրային հեռարձակման բյուջեի առնվազն 25%-ը պետք է հատկացվի ազգային փոքրամասնությունների լեզուներով հեռուստատեսային ծրագրերին:

(զ) Համընդհանուր կրթության մասին օրենք, 13-րդ (2 և 3) Հոդված՝ «Անթույլատրելի է դպրոց ընդունելիս որևէ տեսակի խտրականություն» և «Անթույլատրելի է հանրային դպրոցում ուսումնական գործընթացը կիրառել կրոնական ինդոքսորինացիայի, պրոգելիտիզմի կամ բռնի ուժացման նպատակների համար»,

(է) Բարձրագույն կրթության մասին օրենք, 3-րդ (1) Հոդված՝ «Ամեն տեսակ խտրականության արգելում, այդ թվում ակադեմիական, կրոնական կամ ազգային պատկանելության նշանով»,

(ը) Պացիենտի իրավունքների մասին օրենք, 6-րդ (1) Հոդված՝ «Արգելված է պացիենտի խտրականություն ռասայի, մաշկի գույնի, լեզվի, սեռի, գենետիկական ժառանգականության, հավատի և դավանանքի, քաղաքական և այլ հայացքների, ազգային, էթնիկական և սոցիալական պատկանելության, ծագման, գույքային և դասային իրավիճակի, բնակության տեղի, հիվանդության, սեռական կողմնորոշման կամ անձնական բացասական տրամադրվածության պատճառով»,

(թ) Առողջության պահպանության մասին օրենք, 6-րդ Հոդված՝ «Անթույլատրելի է պացիենտի խտրականություն ռասայի, մաշկի գույնի, սեռի, դավանանքի, քաղաքական և այլ հայացքների, ազգային, էթնիկական և սոցիալական պատկանելության, ծագման, գույքային և դասային իրավիճակի, բնակության տեղի, հիվանդության, սեռական կողմնորոշման կամ անձնական բացասական տրամադրվածության պատճառով»,

(ժ) Մշակույթի մասին օրենք, 6-րդ Հոդված՝ «Վրաստանի քաղաքացիները հավասար են մշակութային կյանքում՝ անխտիր իրենց ազգային, էթնիկական, կրոնական կամ լեզվական պատկանելության»:

(ի) Ոչկալանքային պատժի կատարման կարգի և պրոբացիայի մասին օրենք, 6-րդ Հոդված (2)՝ «Պրոբացիայի ազգային ծառայության աշխատակիցը պարտավոր է հարգել և պաշտպանել անձնավորության իրավունքները և հիմնական ազատությունները, անխտիր ռասայի, մաշկի գույնի, լեզվի, սեռի, դավանանքի, քաղաքական և այլ հայացքների, ազգային, էթնիկական և սոցիալական պատկանելության, ծագման, գույքային և դասային իրավիճակի, բնակության տեղի»:

(լ) Մարդկանց վաճառքի (թրաֆիկինգի) դեմ պայքարի մասին օրենք, 5-րդ (2) Հոդված՝ «Պետության գործունեությունը մարդկանց վաճառքից (թրաֆիկինգից) խուսափելու ոլորտում նախատեսում է կարճ և երկարաժամկետ ծրագրերի մշակում և իրականացում երկրում աղքատության և խտրականության ամեն ձև արմատախիլ անելու համար»:

(խ) Էլեկտրոնային հաղորդակցության մասին օրենք, 32-րդ Հոդվածը սահմանում է առանց խտրականության միջոցառումներ էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի և միջոցների կապակցությամբ իրականացված գործունեության ժամանակ»:

(ծ) Ազատ առևտրի և մրցակցության մասին օրենք, 3-րդ Հոդված՝ Օրենքի նպատակն է «Պետական կամ տեղական իշխանության մարմինների կողմից խտրականության պատճենների առկայության վերացում»:

(կ) Դատապաշտպանների մասին օրենք, 3-րդ Հոդվածը սահմանում է դատապաշտպանների հավասարություն և արգելում է ամեն տեսակ խտրականություն»:

(հ) Միջազգային մասնավոր իրավունքի մասին օրենք, 38-րդ Հոդված՝ «Իրավունքի ընտրությունը կհամարվի չեղյալ, եթե այն անտեսում է այն կայսերական նորմերը, որոնք ընդունվել են բանվոր-ծառայողներին խտրականությունից պաշտպանելու համար»:

(ձ) Սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց սոցիալական պահպանության մասին օրենք, 1-ին (2) Հոդված՝ «Սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց խտրականությունն արգելված է և օրենքով պատժվում է»<sup>29</sup>,

(ղ) Օրենք ոստիկանության մասին, 4-րդ (2) Հոդված՝ «Ոստիկանությունը պարտավոր է հարգել և պաշտպանել անձնավորության իրավունքները և ազատությունները, չնայած նրա քաղաքացիական, գույքային իրավիճակին, ռասայի, սոցիալական և ազգային պատկանելության, սեռի, տարիքի, կրթության, լեզվի և համոզմունքների, քաղաքական և այլ հայացքների»:

(ճ) Մասնագիտական կրթության մասին օրենք, 7-րդ Հոդված՝ «Բոլորն ունեն իրավունք, ստանալու մասնագիտական կրթություն մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ գիտություն, կարողություններ և արժեքներ ձեռք բերելու համար»:

## **Քաղաքացիություն չունեցող անձանց կապակցությամբ**

84. Սոցիալական օգնության մասին Վրաստանի օրենքին համապատասխան, որը տարածվում է քաղաքացիություն չունեցող բոլոր անձանց վրա, ովքեր մշտական բնակվում են Վրաստանում, 2006 թվականին Վրաստանի կառավարությունը, համապատասխան ակտի հիման վրա, մշակեց սոցիալական օգնության մասին ծրագիր: Ծրագիրն ապահովում է սոցիալական օգնություն առանց խտրականության, չնայած ռասսայական, սեռական, ազգային և էթնիկական պատկանելության:

<sup>29</sup> Վրաստանի Քրեական օրենսդրության 142-րդ Հոդվածը նախատեսում է սանկցիա՝ սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց ազգային օրենքներով և միջազգային գործիքներով նախատեսված՝ նրանց իրավունքների իրականացումը իրենց սահմանափակ կարողության հիման վրա մերժելու համար, ինչը առաջացնում է նրանց իրավունքի ոտնձգություն:

## **Գաղթի քաղաքականություն**

85. Տարհանվածների և վերաբնակության նախարարությունը, միջազգային (աշխատանքի միջազգային կազմակերպության (ILO), Դանիայի տարհանվածների խորհրդի (DRC), գաղթի քաղաքականության զարգացման միջազգային կենտրոնի (ICMPD)), ինչպես նաև տեղական կազմակերպությունների հետ համագործակցությամբ, վերջերս սկսեց աշխատանքը գաղթի կառավարման քաղաքականության վրա: 2007 թվականին նախարարության և Դանիայի տարհանվածների խորհրդի կողմից ստորագրվեց փոխըմբռնման մեմորանդում, որպեսզի համատեղ իրականացվի Եվրամիության կողմից աջակցվող AENEAS ծրագիրը, որի նպատակը ներկայացնում է «Վրաստանում (վերադարձածների) վերինտեգրման համար երկարաժամկետ մեխանիզմների ստեղծումը»:

86. Ավարտվեցին խորհրդատվությունները տարհանվածների և վերաբնակեցման նախարարության և գաղթի միջազգային կազմակերպության միջև և գաղթի միջազգային կազմակերպության տեղեկատվական-խորհրդատվական կենտրոնները ենթարկվեցին նախարարությանը: Ներկայումս, խորհրդատվական կենտրոններ են գործում Թբիլիսիում, Քութաիսում, Գորիում և Զուգդիդում: Այս կենտրոնների նպատակն է գաղթի հետ կապված հարցերի մասին սոցիալական գիտակցության

բարձրացումը և վերադարձած միգրանտների ինտեգրման ամրապնդումը իրենց հայրենի երկրում, ինչպես նաև մինչև ուղևորվելը պոտենցիալ միգրանտների խորհրդատվություն այն երկրի վերաբերյալ, որտեղ նրանք ուղևորվում են, նրանց թրաֆիկինգի գոհ դառնալուց խուսափելու համար:

87. Եվրամիության «Գործընկերություն շարժունակության համար» նախաձեռնությունը մեծ նշանակություն ունի օրինական գաղթը ամրապնդելու և անօրեն գաղթից խուսափելու համար: Գործընկերության նպատակն է Եվրամիության և Վրաստանի միջև գաղթի ոլորտում ընդարձակ, կառուցվածքային և ակտիվ համագործակցություն: Այն ընդգրկում է մեծ թվաքանակով համագործակցության նախագծեր, որպեսզի ամրապնդվի գաղթի ոլորտում Վրաստանի ներուժը Եվրամիության այլ անդամ երկրների հետ միասին:

**Հպատակագրում**

88. «Վրաստանի քաղաքացիության մասին» Վրաստանի օրգանական օրենքում 2008 թվականին իրականացված փոփոխությունների արդյունքում, պարզեցվեց հպատակագրության (նատուրալիզացիայի) ընթացակարգը: Հատկանշական է, որ նախորդ ձևակերպման համաձայն, օրենքը (26-րդ Հոդված) քաղաքացիություն ընդունելու համար պահանջում էր, որ անձը մշտական բնակվեր Վրաստանում վերջին 10 տարվա ընթացքում: Փոփոխություններից հետո փոխվեց ընթացակարգը օտարերկրացիների համար, ովքեր Վրաստանի քաղաքացիների հետ են ամուսնացած:

89. Վրաստանի կառավարությունը նշում է, որ 2009 թվականի հունվարից, քաղաքացիության հետ կապված հարցերը փոխանցվեցին քաղաքացիական ռեեստրի գործակալությանը:<sup>30</sup> Փոքր առաջ` դիմումներ ներկայացնելու և որոշումներ ընդունելու ժամկետները 6 ամսից կրճատվեցին մինչև 3 ամիս:

90. Նախագահի որոշման հիման վրա, Վրաստանի (երկակի) քաղաքացիություն կարելի է շնորհել այլ երկրի քաղաքացու, որը Վրաստանի և մարդկության առջև ունի առանձնահատուկ վաստակ իր գիտական, հասարակական գործունեությամբ կամ ունի մասնագիտություն և որակավորում, որով շահագրգռված է Վրաստանը և նրան Վրաստանի քաղաքացիության շնորհումը բխում է պետական շահերից:<sup>31</sup>

**Վրաստանի քաղաքացիության ձեռքբերում հպատակագրությամբ**

2007	96
2008	141
2009	93
<b>Ընդամենը</b>	<b>330</b>

**Վրաստանի նախագահի կողմից Վրաստանի քաղաքացիության շնորհում**

2007	5 563
2008	6 291
2009	3 756
<b>Ընդամենը</b>	<b>15 610</b>

**Ե. 6-ԸՆԴՀԱՆՈՒՄ**

91. Մարդու իրավունքների խախտման դեմ պայքարը, որը հիմնված է ռասսայական, կրոնական կամ այլ մոտիվների վրա, հանդիսանում է Վրաստանում իրավապահ

<sup>30</sup> 23.01.2009 №16 փոփոխություն «Հանրային իրավունքի իրավաբանական դեմք՝ Քաղաքացիական ռեեստրի գործակալության դրույթի հաստատման մասին» Վրաստանի արդարադատության նախարարի 2006 թվականի հունվարի 30-ի №209 հրամանում:

<sup>31</sup> «Վրաստանի քաղաքացիության մասին» օրգանական օրենքի 27-րդ Հոդված:

մարմինների գերակայությունը: Վրաստանի տարածքի շրջանակներում կատարված հանցագործության մասին վիճակագրական տեղեկությունը հավաքվում է ներքին գործերի և արդարադատության նախարարության տեղեկատվական և վերլուծական դեպարտամենտներում: Վրաստանի գլխավոր դատախազության աշխատակազմում մարդու իրավունքների ծառայությունը իրականացնում է այն գործերի մոնիթորինգ, որոնք վերաբերում են հավասարության խախտմանը, ռասսայական խտրականությանը և կրոնական իրավունքների կատարման խոչընդոտմանը, հետապնդմանը և միջամտությանը: Ինչ վերաբերում է կրոնական հիմքի վրա կատարված հանցագործությանը, 2007-2009 թվականներին իրավապահ մարմիններին ներկայացվեց տեղեկություն ենթադրական հանցագործության 44 դեպքի մասին:

92. ՔԳՕ-թյան համապատասխան, այն հանցագործությունների հետաքննությունը, որոնք նախատեսված են 142-րդ Հոդվածով (մարդկանց իրավահավասարության խախտում) և 142<sup>1</sup>-րդ Հոդվածով (ռասսայական խտրականություն) իրականացվում է ներքին գործերի նախարարության կողմից, իսկ հետաքննության ընթացակարգային վերահսկողությունը՝ Վրաստանի գլխավոր դատախազության աշխատակազմի կողմից:

93. Վրաստանի կառավարությունը օժանդակում է կատարված հանցագործության արագ և արդյունավետ հետաքննության վարույթին և նշվածի ապահովման համար իրականացրեց

համապատասխան փոփոխություններ ՔԳՕ-ում: ՔԳՕ-թյան 261-րդ Հոդվածին համապատասխան, հանցագործության մասին տեղեկություն հայթայթելուն պես, քննիչը սկսում է նախնական հետազոտություն իր իրավասության շրջանակներում: Նախնական հետաքննություն սկսելու հիմք է հանցանքի մասին ցանկացած տեղեկությունը, որը ստացվել է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձից, կենտրոնական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, հանրային աստիճանավորից, խուզարկուից, հանցանք գործողից, լրատվամիջոցից, կամ տեղեկություն, որը հայտնաբերվել է հետաքննության գործընթացում: Համապատասխանաբար, օրենսդրական փոփոխությունները և վարչական միջոցառումները, որոնք իրականացրեց Վրաստանի կառավարությունը, կարևոր ներդրում են ունենում ռասսայական մտփվացում ունեցող հանցագործության դեմ պայքայի գործում:

## 2. 7-ԴԴ ՀՈԴՎԱԾ

### Կրթության քաղաքականություն

94. Վրաստանի կառավարությունն ըմբռնում է, որ ազգային փոքրամասնությունների քաղաքացիական ինտեգրում չի իրականացվի առանց ազգային փոքրամասնությունների նկատմամբ համընդգրկուն և առանց խտրականության լուսավորչական քաղաքականություն իրականացնելուց: Բացի համընդհանուր կրթության ծրագրերից, որոնք նշված են վերևում, կրթության և գիտության նախարարությունը, գործընկերների հետ միասին իրականացրեց հետևյալ նախագծերը.

(ա) Երեխաների ներողամտության կրթության ծրագիրը<sup>32</sup> իրականացվեց «Փրկիր երեխաներին» և ազգային ուսումնական պլանների և գնահատման կենտրոնի կողմից: Ծրագրի նպատակն է զարգացնել ներողամտության, համագործակցության և հակամարտության կարգավորման կարողություն-հմտությունները և օժանդակել մարդկային արժեքների ձևավորմանը երեխաների մեջ: Ծրագիրը միտված է ակադեմիական նորությունների և բազմազան կրթական միջավայրի պրակտիկային: Այն հաշվարկված է 9-11 տարեկան տարիքի երեխաների (IV-V դասարաններ), նրանց ուսուցիչների, ծնողների և խնամակալների համար,

(բ) Դպրոցի գործընկերության ծրագիրը<sup>33</sup> նպատակամղված է աշակերտների և ուսուցիչների ինտեգրմանը քաղաքացիական հասարակության մեջ, ինչպես նաև վրացական և ոչվրացական դպրոցների միջև գործընկերության զարգացմանը,

(գ) «Եկեք, ապրենք միասին» ծրագիրը աջակցվում էր Բրիտանիայի խորհրդի կողմից Եվրոպայի խորհրդի օգնությամբ: Դրա նպատակն է ներողամտության և միջմշակութային երկխոսության ուժեղացումը Եվրոպայում: Ծրագրի ընթացքում երիտասարդները (այդ թվում ազգային փոքրամասնություններ Վրաստանից) մասնակցում էին սեմինարների, բանավեճերի և խաղերի և փոխանակեցին իրենց փորձը, թե ինչ է նշանակում ապրել և մեծանալ հակամարտության և դրա հետևանքների պայմաններում: Նրանք հայթայթեցին նաև բանակցությունների և միջնորդության նոր կարողություն-հմտություններ,

(դ) Միջմշակութային երկխոսությունը կրթության ոլորտում Եվրոպայի խորհրդի և կրթության և գիտության նախարարության միասնական նախաձեռնությունն է և այն օժանդակում է մշակութային բազմազանության հարգման զարգացմանը և լուսավորական հիմնարկությունների

միջև միջմշակութային երկխոսության ոլորտում լավագույն փորձի փոխանակմանը: 2009 թվականին, Վրաստանում անցկացվեց երրորդ միջազգային սեմինարը մշակույթի և կրոնի մասին. Կրիտիկական աշխարհայացք և հաղորդակցության կարողություն-հմտությունների զարգացում ուսումնական պլանների միջոցով:

### **Ուսումնական միջավայրի բարելավում**

95. 2006 թվականից առանձնահատուկ ուշադրություն է դարձվում «Իսկոբ Գոգեբաշվիլու հզոր ծրագրի շրջանակներում ուսումնական միջավայրի բարելավմանը դպրոցների վերականգնման ուղիով: 2009 թվականի վերջին, վերականգնվեց 60 դպրոց Սամցխե-Ջավախեթում և 39 դպրոց Քվեմո Քարթլիի տարածաշրջանում: Երկրորդ պետական ծրագրի

---

<sup>32</sup> Ծրագիրն իրականացվեց 2002-2006 թվականներին

<sup>33</sup> Ծրագիրն իրականացվեց 2004-2007 թվականներին:

շրջանակներում, որի վերնագիրն է «Եղևիկի ցատկ», 120 աղբբեջանական և 140 հայկական դպրոց սարքավորվեց 1,299 և 1,015 համակարգիչով:

### **Մշակույթ**

96. 2004 թվականից մշակույթի, հուշարձանների պահպանության և սպորտի նախարարությունն իրականացնում է «Ազգային փոքրամասնությունների մշակութային կենտրոնների աջակցության ծրագիր», որի նպատակն է Վրաստանում ազգային փոքրամասնությունների մշակույթի պահպանում, զարգացում և աջակցություն և դրանց հետագա ինտեգրում Վրաստանի մշակութային տարածքում»:

97. Նախագիծն իրականացվում է ՀԻԴ Դավիթ Բաագովի Վրաստանի հրեաների պետական պատմա-ազգագրական թանգարանի, Կովկասյան տուն մշակութային հարաբերությունների կենտրոնի, ՀԻԴ Միրզա-Ֆաթալի Ախունդովի աղբբեջանական մշակութային թանգարանի, ՀԻԴ Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական թատրոնի և ՀԻԴ Թբիլիսիի աղբբեջանական թատրոնի կողմից: Նշված մշակութային կենտրոնները նպաստում են ազգային փոքրամասնությունների մշակութային բազմազանության պահպանությանը, միջմշակութային հարաբերությունների զարգացմանը և մարդու իրավունքների և ազատությունների, այդ թվում արտահայտելու իրավունքի պաշտպանությանը:

Դրա հետ միասին, ստորև տրված աղյուսակը ներկայացնում է սիրողական թատրոնները, գրադարանները և ակումբները, որոնք աշխատում են խիտ բնակեցված շրջաններում:

	<i>Երաժշտական դպրոց</i>	<i>Նկարչական դպրոց</i>	<i>Գրադարան</i>	<i>Հասարակական ակումբներ</i>
Ղվարելի	1			
Ախալքալաքի	1	1	2 հայկական	4 10 հայկական
Նինոծմինդա	1		18 հայկական	2 18 հայկական
Մառնեուլի	1		11 ադրբեջանական 4 հայկական	4
Ծալկա	1		1 հայկական	1
Գորի-Էրեղվի	1		5 օսական	
Գարդաբանի			1 ադրբեջանական 14 միասնական	1
Բոլնիսի			2 ադրբեջանական	
Դմանիսի			1 ադրբեջանական	

### Լրատվամիջոցներ

98. Հեռարձակման մասին օրենքի համաձայն, Վրաստանի հանրային հեռարձակումը պարտավոր է ծրագրերում արտացոլել ազգային, մշակութային, լեզվական և կրոնական բազմազանությունը և նմանապես հաղորդել ծրագրեր փոքրամասնությունների լեզուներով: Վերջին ժամանակաշրջանում իրականացված փոփոխությունների համաձայն, հանրային հեռարձակման ծրագրերի բյուջեի առնվազն 25%-ը պետք է կիրառվի ազգային փոքրամասնությունների լեզուներով ծրագրերի համար: Հատկանշական է, որ շաբաթական մեկ անգամ լրատվական հաղորդումներ են հեռարձակվում հանրային հեռարձակման եթերով փոքրամասնությունների 5 լեզուներով՝ արխազերեն, օսերեն, հայերեն, ադրբեջաներեն և ռուսերեն լեզուներով: Ամենշաբաթյա «Իտալիուրի կզո» (Իտալական բակ) թոք-շուն ամբողջությամբ նվիրվում է ազգային փոքրամասնությունների

ինտեգրմանը և դրանցում քննարկվել են հարցեր՝ սկսած կանանց իրավունքներից և բարձրագույն կրթությունից, արվեստի և երաժշտության ոլորտները ներառյալ: 2009 թվականից, թոք-շուն հաղորդվում է փոփոխված ձևաչափով և նոր անվանումով՝ «Մեր բակը»: 2008 թվականին հանրային հեռարձակումը պատրաստեց ինը վավերագրական ֆիլմ ազգային փոքրամասնությունների մասին, որը վերաբերում է Վրաստանում բնակվող ինը (հայեր, ադրբեջանցիներ, հրեաներ, հույներ, քրդեր, քիստեր, հուդդայականներ, ուկրաինացիներ, օսեր) ազգային փոքրամասնությունների պատմությանը: Հանրային ռադիոյի եթերով նույնպես հեռարձակվում են ամենօրյա լրատվական թողարկումներ ազգային փոքրամասնությունների հինգ լեզվով՝ արխազական, օսական, ռուսական, ադրբեջանական և հայկական լեզուներով: Հանրային ռադիոն նաև հաղորդում է վերլուծական հաղորդումներ ռուսերեն լեզվով, ամենշաբաթյա լրատվական ռադիո կամուրջ Թբիլիսի-Բաքու և «Մեր Վրաստանը» ծրագիրը, որը առաձևահատուկ ուշադրություն է կենտրոնացնում ազգային և կրոնական փոքրամասնությունների պատմության, նրանց ավանդույթների և մշակույթի վրա: 2010 թվականի հունվարից հանրային հեռարձակմանը կից ստեղծվեց «Առաջին Կովկասյան» հեռուստատեսային ալիքը ռուսալեզու բնակչության համար, որը ծածկում է ոչ միայն Վրաստանը, այլև ողջ Կովկասը: Ալիքը հաղորդում է տեղեկատվություն Վրաստանում ընթացող երևույթների, Կովկասում բնակվող ժողովուրդների մշակութային ժառանգության, նրանց խաղաղ համագոյակցության, ինչպես նաև խաղաղության օժանդակության և տարածաշրջանում զարգացող ապագա հեռանկարների մասին:

Մշակույթի նախարարությունը օժանդակում է տպագիր մեդիայի զարգացմանը փոքրամասնությունների լեզուներով հայկական «Վրաստան» թերթի, ադրբեջանական «Գուրջիստան» թերթի և ռուսերեն «Սվոբոդնայա զագետա» թերթի հրատարակությամբ:

99. Հանրային հեռարձակումից բացի, տեղական հաղորդիչները հաղորդում են ծրագրեր փոքրամասնությունների լեզուներով: Օրինակ, ՏՎ սպեկտրը, որը հաղորդվում է ռուսերեն և հայերեն լեզուներով, ծածկում է Ջավախերի և Քվեմո Քարթլիի տարածաշրջանները: Փարվանա ՏՎ և ԱՏՎ-12 հաղորդվում են հայերեն լեզվով: Մառնեուլի ՏՎ ձեռնհաս է Քվեմո Քարթլիում և այն հաղորդվում է վրացերեն և ադրբեջաներեն լեզվով: ՏՎ Ալանիան հաղորդվում է ռուսերեն լեզվով և ծածկում է Թբիլիսին և այլ շրջաններ, այդ թվում Ցխինվալի տարածաշրջանը/Հարավային Օսեթիան:

100. 2009 թվականի մարտին, Վրաստանի հաղորդակցությունների ազգային հանձնաժողովը ընդունեց հաղորդիչի վարքի օրենսդրությունը: Օրենսդրությունը վերաբերում է հաղորդիչների կողմից բազմազանության, հավասարության և ներողամտության պահպանության հարցերին և ուղղակի սահմանում է, որ հաղորդիչը պետք է խուսափի ոչճիշտ կամ սխալմունքի մեջ մտնող հայտարարություններ անելուց, որոնք նպաստում են ստերեոտիպերի ձևավորմանը, Առանց անհրաժեշտության չպետք է նշի անձի ազգային ծագումը կամ կրոնական համոզմունքը կամ կատարի ոչպատշաճ հայտարարություններ, որոնք կարող են օժանդակել խտրականությանը կամ բռնությանը: Դրա հետ միասին, 2010 թվականի հունվարի 1-ից, լրատվամիջոցների զարգացման հիմնադրամը իրականացնում է մոնիթորինգ վրացալեզու մեդիայում ազգային և էթնիկական փոքրամասնությունների հարցերի լուսաբանմանը: Նախագիծը իրականացվում է UNAG-ի<sup>34</sup> և EPF-ի<sup>35</sup> «Ազգային ինտեգրումը և ներողամտությունը Վրաստանում» ծրագրի շրջանակներում, որին ֆինանսական աջակցություն է ցուցաբերում ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալությունը (USAID):

101. Կիբեռտարածքում [www.diversity.ge](http://www.diversity.ge) կա Վրաստանում առաջին էլեկտրոնային կայք-էջը, որը լրիվությամբ հատկացված է և հազեցնում է ազգային փոքրամասնությունների հետ կապված ամբողջ շարք հարցեր: Կայք-էջը եռալեզու է և այն ձեռնհաս է վրացերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Դրա նպատակն է ազգային փոքրամասնությունների հետ կապված

---

<sup>34</sup> Վրաստանում ՄԱԿ-ի ասոցիացիա:

<sup>35</sup> Եվրասիական համագործակցության հիմնադրամ:

գործընթացների, նրանց պատմության և մշակույթի մասին գիտակցության բարձրացում, ինտեգրման և ներդրամտության աջակցություն, գործընթացներին լայն հասարակայնության մասնակցության աջակցություն:

## Է. 22-ՐԴ ՀՈԴՎԱԾ

102. Վրաստանի կառավարությունը ռասսայական խտրականության վերացման կոմիտեին տեղեկացնում է, որ 2008 թվականի օգոստոսի 12-ին<sup>36</sup> ներկայացրեց միջպետական հայտ Ռուսաստանի Դաշնության դեմ ՄԱԿ-ի արդարադատության դատարանի առջև՝ ռասսայական խտրականության ամեն ձևի վերացման մասին 1965 թվականի միջազգային կոնվենցիայի խախտման մասին:

---

<sup>36</sup> Տե՛ս՝ <http://www.icj-cij.org/docket/index.php?p1=3&p2=3&k=4d&case=140&code=GR&p3=6>.